

4

ՕԳՈՍՏՈՒԻ
2020



ԱՂՔԱՏՈՒԹՅՈՒՆԸ,
ԶԲԱՂՎԱԾՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ
ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ
ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ.
ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ
ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ

**ԱՂՔԱՏՈՒԹՅՈՒՆԸ, ԶԲԱՂՎԱԾՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ
 ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ. ՀՀ
 ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ
 ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ**

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐ 1

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ 2

ՄԱՍ 1. ԶԲԱՂՎԱԾՈՒԹՅԱՆ ԽԹԱՆՄԱՆԸ ԵՎ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՊԱՅՄԱՆՆԵՐԻ
 ԲԱՐԵԼԱՎՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ՊԵՏԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ 4

 1.1. Զբաղվածություն, գործազրկություն. Էությունը, հաշվարկման մեթոդաբանությունը և
 վերջին տարիների վիճակագրությունը ՀՀ-ում..... 4

 1.2. Զբաղվածության ընդլայնման, նոր աշխատատեղերի ստեղծման ուղղությամբ ՀՀ
 կառավարության խոստումները, իրականացված քայլերը և արդյունքները..... 13

 1.2.1. Զբաղվածության ընդլայնում, նոր աշխատատեղերի ստեղծում..... 13

 1.2.2. Զբաղվածության կարգավորման ինստիտուցիոնալ շրջանակը 20

ՄԱՍ 2. ԱՂՔԱՏՈՒԹՅԱՆ ՀԱՂԹԱՀԱՐՄԱՆ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԻ ԼՈՒԾՄԱՆՆ
 ՈՒՂՂՎԱԾ ՊԵՏԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ 24

 2.1. Աղքատություն և սոցիալական ոլորտ. հաշվարկման մեթոդաբանությունը,
 վիճակագրությունը, սոցիալական միջոցառումները..... 24

 2.2. Աղքատության հաղթահարման և սոցիալական խնդիրների լուծմանն ողղված ՀՀ
 կառավարության խոստումները, իրականացված քայլերը և արդյունքները..... 26

 2.2.1. Աղքատության մակարդակը 26

 2.2.2. Սոցիալական ծառայություններ և ժողովրդագրություն 28

 2.2.3 Զբաղվածության կարգավորման պետական ծրագրերը 30

2.2.4. Կենսաթոշակներները և նվազագույն աշխատավարձը.....	33
ՄԱՍ 3. COVID-19-ի ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԻ ՉԵԶՈՔԱՑՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ԵՎ ԴՐԱՆՑ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՌՈՏ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ.....	35
ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ.....	39
Հավելված 1. Աշխատանքի շուկայի և վարձատրության ցուցանիշները և որոշ ցուցանիշների հաշվարկման մեթոդաբանական առանձնահատկությունները	42
Հավելված 2. Աղքատությունը բնութագրող ցուցանիշները և դրանց հաշվարկման մեթոդաբանական առանձնահատկությունները	49
Հավելված 3. Նոր ստեղծված և կրճատված աշխատատեղերն ըստ աշխատատեղի բնույթի և տնտեսության ինստիտուցիոնալ հատվածների, 2019-2020թթ. եռամսյակներ	52

ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐ

ԱԹ	Աշխատուժի թերօգտագործում
ԱՄԿ	Աշխատանքի միջազգային կազմակերպության
ԱՎՄՀ	Աշխատանքի վիճակագիրների միջազգային համաժողով
ԵԱՏՄ	Եվրասիական տնտեսական միություն
ՀԲ	Համաշխարհային բանկ
ՀՀ	Հայաստանի Հանրապետություն
ՀՀ ԱԱՏՄ	ՀՀ առողջապահական և աշխատանքի տեսչական մարմին
ՀՀ ԱՍՀՆ	ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն
ՀՀ ՊԵԿ	ՀՀ պետական եկամուտների կոմիտե
ՀՀ ՊՆ	ՀՀ պաշտպանության նախարարություն
ՀՀ ՎԿ	ՀՀ վիճակագրական կոմիտե
ՄԱԿ	Միավորված ազգերի կազմակերպություն
ՓՄՁ	Փոքր և միջին ձեռնարկատիրություն

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

2018 թվականի ապրիլ-մայիսյան հայտնի իրադարձություններից հետո ՀՀ նորաստեղծ կառավարությունը հայտարարեց ազատ, արժանապատիվ և երջանիկ քաղաքացու կերտման հրամայականը, որի առանցքային բաղադրատարրերից համարվեցին աղքատության հաղթահարումը, կարճ ժամանակահատվածում ծայրահեղ աղքատության վերացումը, սոցիալական ապահովության ամրապնդումը, անապահով և խոցելի խմբերի աջակցության արդյունավետության բարձրացումը, ինչպես նաև մեծ թվով նոր աշխատատեղերի ստեղծումը, բոլոր հպարտ քաղաքացիներին արժանապատիվ, միջազգային ստանդարտների աշխատանքային և իրավական պայմաններին համապատասխան աշխատանքով ապահովելը:

Աղքատության հաղթահարմանը, սոցիալական արդարությանը, զբաղվածության խթանմանն ուղղված ծրագրային մոտեցումներն իրենց արտահայտությունը գտան 2018 թվականի արտահերթ խորհրդարանական ընտրական գործընթացների շրջանակում ներկայացված «Իմ քայլը» դաշինքի նախընտրական ծրագրում, ՀՀ կառավարության 2018 թվականի հունիսի 1-ի թիվ 581-Ա և 2019 թվականի փետրվարի 8-ի թիվ 65-Ա որոշումներով ընդունված «Հայաստանի Հանրապետության կառավարության ծրագրի մասին» փաստաթղթերում:

Կյանքի բարելավմանը միտված դրույթները տեղ գտան վերոհիշյալ փաստաթղթերում, սակայն կարևոր է, թե ինչ կատարվեց իրականում այդ ուղղությամբ, և արդյո՞ք իրականացան խոստացված բարեփոխումները:

Սույն վերլուծությամբ փորձ է կատարվում պատասխանել վերոհիշյալ հարցերին: Նպատակն է՝ վերլուծել խոստացված և այդ ուղղությամբ իրականացված քայլերը, հասկանալ՝ արդյո՞ք Հայաստանի Հանրապետությունը ճիշտ ուղղությամբ կամ պատշաճ տեմպերով է գնում գործազրկության կրճատման, զբաղվածության ընդլայնման, սոցիալական խնդիրների լուծման հարցում:

Հարկ է նշել, որ աղքատության և գործազրկության դեմ պայքարը, զբաղվածության խթանումը փոխկապակցված են, և միջազգային պրակտիկայում ընդունված՝ վերջիններիս վրա ազդեցության գործիքակազմը բավականին լայն է: Այսպես, օրինակ, գործազրկության տարբեր տեսակների դեմ պայքարը ենթադրում է տարբեր առանձնահատուկ գործիքակազմեր: Հաշվի առնելով, որ ներկայումս ՀՀ-ում առկա չէ որևիցե ռազմավարական փաստաթուղթ վերոհիշյալ հարցերով, և հնարավոր չէ առավել մանրամասն անդրադառնալ ամբողջ գործիքակազմին, սույն ուսումնասիրության շրջանակում փորձ է կատարվել ավելի պարզ ճանապարհով գնահատել ՀՀ կառավարության գործունեությունը:

Այսպիսով, վերլուծությունը կատարվել է հետևյալ տրամաբանությամբ և կառուցվածքով. սկզբում նկարագրվում է գործազրկությունը, զբաղվածությունը նկարագրող

ցուցանիշների էությունը, ՀՀ-ում օրենսդրորեն կամ պրակտիկայում կիրառվող հասկացությունները և հաշվարկման մեթոդաբանության առանձնահատկությունները: Այնուհետև ներկայացվում են վերջին տարիների վիճակագրական տվյալները՝ շեշտադրելով նախաիշխանափոխական և հետիշխանափոխական ժամանակահատվածները՝ ըստ հնարավորության¹: Ըստ զբաղվածության ընդլայնման, գործազրկության և աղքատության կրճատման ուղղությունների՝ ուսումնասիրվել են ՀՀ կառավարության խոստումները, դրանց ուղղությամբ կատարված քայլերը: Համառոտ անդրադարձ է կատարվել նաև ՀՀ կառավարության խոստումների իրատեսականությանը և կատարված քայլերի արդյունավետությանը: Վերջում ամփոփվել են վերլուծության արդյունքները և կատարվել համապատասխան եզրակացություններ:

Կարծում ենք, որ սույն աշխատանքը որոշակի լույս կսփռի տնտեսական և սոցիալական կարևորագույն հարցերում վերջին տարիների զարգացումների վրա:

¹ Հարկ է նշել, որ մեզ հետաքրքրող վիճակագրության մեթոդաբանությունը վերջին տարիներին փոփոխվել է, ինչը հնարավորություն չի տալիս ավելի երկար ժամանակահատվածի համադրելի տվյալներ ներկայացնել:

ՄԱՍ 1. ԶԲԱՂՎԱԾՈՒԹՅԱՆ ԽԹԱՆՄԱՆԸ ԵՎ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՊԱՅՄԱՆՆԵՐԻ ԲԱՐԵԼԱՎՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ՊԵՏԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1.1. Զբաղվածություն, գործազրկություն. Էությունը, հաշվարկման մեթոդաբանությունը և վերջին տարիների վիճակագրությունը ՀՀ-ում

Ուսումնասիրելով կառավարության զբաղվածության խթանմանն ուղղված քաղաքականությունը, այսինքն՝ առաջին հերթին այն խոստումները, որոնք տրվել են նոր աշխատատեղերի ստեղծման մասով, աչքի է զարնում մի հետաքրքիր փաստ՝ գրեթե խոսք չկա գործազրկության մակարդակի նվազեցման և այդ ուղղությամբ կատարվելիք կամ ակնկալվող գործողությունների մասին: Հայտնի է, որ զբաղվածության խթանումը անմիջականորեն կապված է գործազրկության դեմ պայքարի հետ, սակայն այն գործազրկության մակարդակի նվազման բաղադրիչներից մեկն է: Օրինակ, երբ պետությունը որևիցե ծրագրով խթանում է կանանց զբաղվածությունը, և տնային տնտեսուհիները ներգրավվում են աշխատուժի մեջ, դա դեռևս կարող է բավարար չլինել գործազրկության մակարդակը նվազեցնելու տեսանկյունից:

Ըստ միջազգային պրակտիկայում ընդունված տեսական հիմունքների, գործազրկության տարբեր տեսակների դեմ պայքարը ենթադրում է տարբեր գործիքակազմ, օրինակ՝ կառուցվածքային գործազրկության դեմ կարող են կիրառվել ներքին շուկան պաշտպանող պրոտեկցիոնիստական միջոցառումներ, տեխնոլոգիական գործազրկության դեմ՝ աշխատողների մասնագիտական կարողությունների կատարելագործման միջոցառումներ, ցիկլիկ կամ պարբերաշրջանային գործազրկության դեմ՝ պետության կողմից հանրային աշխատանքների կազմակերպման միջոցով նոր աշխատատեղերի ստեղծում, իսկ ֆրիկցիոն գործազրկության դեմ՝ աշխատանքի շուկայի տեղեկատվական ապահովության բարձրացման միջոցառումներ և այլն: Վերոհիշյալն ամենևին ամբողջական գործիքակազմը չէ. վերլուծությունում կփորձենք հասկանալ՝ արդյո՞ք նշված կամ այլ ուղղություններով կատարվել են որոշակի գործողություններ, թե՞ ոչ:

Ինչ վերաբերում է զբաղվածության խթանմանը, ապա այն հիմնականում երկու ճանապարհով է իրականացվում. կա՛մ պետությունը ինքն է ստեղծում նոր աշխատատեղեր՝ հիմնականում հանրային աշխատանքների կազմակերպման միջոցով, կա՛մ տարբեր գործիքակազմով խթանում է մասնավոր հատվածի ընդլայնումը՝ նոր աշխատատեղեր ստեղծելու նպատակով: Այս մասով, ի սկզբանե, որոշ խնդիրներ են նկատվում, քանի որ դժվար է խթանել զբաղվածությունը մասնավոր հատվածում, երբ երկրում չկա տնտեսական քաղաքականության ռազմավարություն, կամ գոնե առանձին

ուրորտների, օրինակ՝ արդյունաբերության կամ ՓՄՁ զարգացման ռազմավարություններ:

Այնուամենայնիվ, նախքան բուն վերլուծությունը սկսելը, հարկ ենք համարում հատուկ ուշադրություն դարձնել Հայաստանում գործազրկության, զբաղվածության, աղքատության և այլ համապատասխան հասկացություններին և ցուցանիշների հաշվարկման մեթոդաբանության առանձնահատկություններին (հասկացությունների և մեթոդաբանության վերաբերյալ առավել մանրամասն տե՛ս Հավելված 1)², քանի որ հաճախ մամուլում կամ պաշտոնատար անձանց կողմից հրապարակվում են վերոհիշյալ ցուցանիշների վերաբերյալ տվյալներ, որոնք հետագայում ՀՀ վիճակագրական կոմիտեի (այսուհետ՝ ՀՀ ՎԿ) հրապարակումներում այլ կերպ են արտացոլվում: Սույն վերլուծությունում մենք հիմք ենք ընդունելու և համեմատելու ենք ընդունված մեթոդաբանությամբ³ հաշվարկված և հրապարակված պաշտոնական վիճակագրական տվյալները: Ստորև ներկայացնում ենք ՀՀ ՎԿ կողմից կիրառվող որոշ հասկացություններ⁴.

Աշխատուժի մեջ ներառվում են զբաղվածները և գործազուրկները, ովքեր դիտարկվող ժամանակահատվածում աշխատանքի շուկայում ապահովվում են աշխատուժի առաջարկը՝ ապրանքների և ծառայությունների արտադրության համար:

Զբաղված են համարվում անձինք, ովքեր դիտարկվող ժամանակահատվածում **եկամուտ (աշխատավարձ) ստանալու նպատակով գոնե մեկ ժամ** զբաղվել են ապրանքների արտադրությամբ կամ տրամադրել են ծառայություններ՝ **բացառապես այլոց սպառման համար**:

Զբաղվածության մակարդակը հաշվարկվում է զբաղվածների թվաքանակի տոկոսային հարաբերությամբ համապատասխան տարիքային խմբի առկա բնակչության (աշխատանքային ռեսուրսների) թվաքանակին:

Գործազուրկ են համարվում անձինք, ովքեր հետագոտվող ժամանակաշրջանում միաժամանակ բավարարել են հետևյալ երեք պայմաններին՝

- չեն ունեցել աշխատանք կամ եկամտաբեր զբաղմունք.

² https://www.armstat.am/file/article/sv_12_19a_6300.pdf

³ Հարկ է նշել, որ 2018թ.-ից նշանակալիորեն վերանայվել է ՀՀ աշխատուժի, այդ թվում՝ գործազրկության վիճակագրության հիմքում ընկած մեթոդաբանությունը՝ նպատակ ունենալով պատշաճ կերպով արտացոլելու աշխատաշուկայի նոր զարգացումները, ապահովելու աշխատուժի վիճակագրության արդիականությունը և միջազգային համադրելիությունը: Ըստ որում, այն անդրազգային գործընթաց է՝ հիմնված 2013թ. Աշխատանքի վիճակագիրների միջազգային 19-րդ համաժողովում ընդունված «Աշխատանքի, զբաղվածության և աշխատուժի թերօգտագործման վիճակագրության մասին» (19-րդ ԱՎՄՀ) բանաձևի առանցքային դրույթների վրա՝ Resolution concerning statistics of work, employment and labour underutilization (19th ICLS, October 2013) <https://ilostat.ilo.org/about/standards/icls/icls-documents/>:

⁴ https://www.armstat.am/file/article/sv_12_19a_6300.pdf

- ակտիվորեն փնտրել են աշխատանք՝ օգտագործելով ցանկացած միջոց, այսինքն՝ դիմել են զբաղվածության պետական և (կամ) մասնավոր գործակալություն, աշխատանք են փնտրել ծանոթների, բարեկամների, հայտարարությունների միջոցով կամ ցանկացած այլ եղանակով՝ հետազոտությանը նախորդող վերջին 4 շաբաթվա ընթացքում.
- պատրաստ են եղել անմիջապես (այսինքն՝ առաջիկա 2 շաբաթվա ընթացքում) անցնել աշխատանքի:

Գործազրկության մակարդակը հաշվարկվում է գործազուրկների թվաքանակի տոկոսային հարաբերակցությամբ աշխատուժի թվաքանակին:

Զբաղվածության պետական գործակալությունում գրանցված գործազուրկ են համարվում տարիքային կենսաթոշակի տարիքը չլրացած՝ աշխատանք փնտրող և «Զբաղվածության մասին» ՀՀ օրենքով նախատեսված գործունեության որևէ տեսակով չզբաղված անձինք, ովքեր աշխատանք գտնելու նպատակով հաշվառված են զբաղվածության պետական գործակալությունում, պատրաստակամ են անցնելու հարմար աշխատանքի և ստացել են գործազուրկի կարգավիճակ:

Աշխատատեղերի թիվն աշխատողների փաստացի թվաքանակի (զբաղեցված աշխատատեղերի), այդ թվում արտաքին համատեղությամբ աշխատողների⁵ և թափուր աշխատատեղերի հանրագումարն է՝ հետազոտվող տարվա հունվարի 1-ի կամ դեկտեմբերի 31-ի դրությամբ:

Նոր ստեղծված աշխատատեղ են համարվում հետազոտվող տարում առաջին անգամ ստեղծված կազմակերպությունում առաջացած աշխատատեղերը, ինչպես նաև գործող կազմակերպությունում (օրինակ՝ արտադրության ընդլայնման, հերթափոխային աշխատանքների ավելացման, ինչպես նաև վերակազմավորման արդյունքում) ստեղծված նոր (առաջին անգամ ստեղծված) աշխատատեղը և այլն:

Նախքան զբաղվածության և գործազրկության վիճակագրության ներկայացումը, նախ անդրադառնանք վերջին տարիների ժողովրդագրական, աշխատանքային ռեսուրսների, աշխատուժի ցուցանիշներին:

Աղյուսակ 1. ՀՀ մշտական բնակչության դինամիկան ըստ տարիների՝ հունվարի 1-ի դրությամբ, հազ. մարդ⁶

	2017	2018	2019	2020
ՀՀ մշտական բնակչությունը	2986.1	2972.7	2965.3	2959.7

⁵ Համատեղության կարգով այլ աշխատանք կատարողներ

⁶ <https://www.armstat.am/am/?nid=82&id=2256>

Քաղաք	1901.4	1895.8	1894.9	1892.1
Գյուղ	1084.7	1076.9	1070.4	1067.6

Աղբյուր՝ ՀՀ ՎԿ

Աղյուսակ 2. ՀՀ մշտական բնակչության դինամիկան ըստ տարիների՝ ապրիլի 1-ի դրությամբ, հազ. մարդ

	2017	2018	2019	2020
ՀՀ մշտական բնակչությունը	2981.5	2969.9	2962.1	2956.9
Քաղաք	1899	1894.5	1893.4	1890.6
Գյուղ	1082.5	1075.4	1068.7	1066.3

Աղբյուր՝ ՀՀ ՎԿ

Այսպես, ըստ ՀՀ ՎԿ հրապարակած տվյալների, վերջին տարիներին դիտարկվում է մշտական բնակչության նվազման միտում: Ճիշտ է, 2019 և 2020թթ. նվազման տեմպերը փոքր-ինչ դանդաղել են, այնուամենայնիվ, չի նկատվում խոստացված առաջանցիկ տեմպերով աճը:

Ինչ վերաբերում է աշխատանքային ռեսուրսներին և աշխատուժի առաջարկին, ապա այս ցուցանիշները նույնպես կտրուկ փոփոխությունների չեն ենթարկվել: Ավելին, աշխատանքային ռեսուրսները 2019-ին, 2017-ի համեմատ, պրակտիկորեն չեն փոփոխվել (տե՛ս Աղյուսակներ 3 և 4):

Աղյուսակ 3. Աշխատանքի շուկայի հիմնական ցուցանիշները, միջին տարեկան, հազ. մարդ⁷

	2017թ.	2018թ.	2019թ.
Աշխատանքային ռեսուրսներ	2 021.3	2 007.30	2 022.0
Աշխատուժից դուրս բնակչություն	881.5	865.8	854.7
Աշխատուժ (աշխատուժի առաջարկ)	1 139.9	1 141.6	1 167.2
Զբաղվածներ	903.3	907.5	946.8
Գործազուրկներ	236.5	234	220.5

Աղբյուր՝ ՀՀ ՎԿ

⁷ https://www.armstat.am/file/article/sv_03_20a_141.pdf

Աղյուսակ 4. Աշխատանքի շուկայի հիմնական ցուցանիշները՝ եռամսյակներով, հազ. մարդ⁸

	2017թ.				2018թ.				2019թ.			
	I	II	III	IV	I	II	III	IV	I	II	III	IV
Աշխատանքային ռեսուրսներ	2 042.1	2 094.1	1 951.7	2 006.5	2 055.4	2 013.4	1 989.3	989.0	1 065.5	2 014.0	2 007.4	1 997.8
Աշխատուժից դուրս բնակչություն	922.7	912.5	823.4	876.5	902.0	846.0	826.1	890.1	906.6	842.6	800.2	866.4
Աշխատուժ (աշխատուժի առաջարկ)	1 119.4	1 181.6	1 128.2	1 130.0	1 153.3	1 167.4	1 163.2	98.9	1 158.9	1 171.4	1 207.2	1 131.5
Զբաղվածներ	875.9	938.8	903.3	896.7	915.7	931.0	931.2	870.1	905.3	964.2	990.4	929.2
Գործազուրկներ	243.6	242.8	224.9	233.3	237.6	236.4	233.7	228.8	253.6	207.2	216.9	202.3

Աղբյուր՝ ՀՀ ՎԿ

Ինչ վերաբերում է զբաղվածների և գործազուրկների թվին, ապա կարելի է փաստել, որ այս մասով առկա է որոշակի բարելավում: Գործազուրկների թիվը 2019թ. նվազել է 2017թ. համեմատ 16.500-ով կամ փոփոխությունը կազմել է 6.8%, իսկ զբաղվածների թիվը աճել է 43.500-ով կամ փոփոխությունը կազմել է 4.8%: Մեր կարծիքով դրական փոփոխությունները տեղի են ունեցել հիմնականում չգրանցված աշխատողների ստվերից դուրս բերման հաշվին, քանի որ զբաղվածների մեծ մասն ավելացել է աշխատուժից դուրս գտնվող բնակչության հաշվին: Այս դեպքում դժվար է պատկերացնել, որ նոր ստեղծված աշխատատեղերում (նոր ստեղծված կազմակերպությունում կամ առավել ևս ընդլայնվող ընկերությունում) կներգրավվեն հետազոտվող ժամանակաշրջանում **չաշխատող և աշխատանք չփնտրող քաղաքացիները** (տե՛ս աշխատուժից դուրս գտնվող բնակչության սահմանումը Հավելված 1):

⁸ https://www.armstat.am/file/article/sv_03_20a_141.pdf

Աղյուսակ 5. Բնակչության տնտեսական ակտիվությունը, միջին տարեկան⁹, %

	2017թ.	2018թ.	2019թ.
Աշխատուժի մասնակցության մակարդակ	56.4	56.9	57.7
Զբաղվածության մակարդակ	44.7	45.2	46.8
Գործազրկության մակարդակ	20.8	20.5	18.9

Աղբյուր՝ ՀՀ ՎԿ

Աղյուսակ 6. Բնակչության տնտեսական ակտիվությունը, եռամսյակներով, %¹⁰

	2017թ.				2018թ.				2019թ.			
	I	II	III	IV	I	II	III	IV	I	II	III	IV
Աշխատուժի մասնակցության մակարդակ	54.8	56.4	57.8	56.3	56.1	58.0	58.5	55.2	56.1	58.2	60.1	56.6
Գործազրկության մակարդակ	42.9	44.8	46.3	44.7	44.6	46.2	46.8	43.7	43.8	47.9	49.3	46.5
Գործազրկության մակարդակ	21.8	20.5	19.9	20.6	20.6	20.2	20.1	20.8	21.9	17.7	18.0	17.9

Աղբյուր՝ ՀՀ ՎԿ

Հարկ է նշել, որ կազմակերպությունների թվի, աշխատողների թվաքանակի և աշխատավարձի ներքոհիշյալ տվյալների աղբյուրը ՀՀ ՎԿ-ի համար հանդիսանում է ՀՀ պետական եկամուտների կոմիտեի (ՀՀ ՊԵԿ) Եկամտային հարկի և սոցիալական վճարի անձնավորված հաշվառման տվյալների բազան: Այս առումով, պետական մարմինների կողմից լրացուցիչ պարզաբանման կարիք ունի այն հանգամանքը, որ ըստ ՀՀ ՎԿ տվյալների՝ զբաղվածների թիվը 2019-ին, 2017-ի համեմատ, աճել է շուրջ 44 հազարով, իսկ աշխատողների թվաքանակը շուրջ 100 հազարով (տե՛ս Աղյուսակ 7): Իհարկե, կարելի է հղում կատարել մեթոդաբանության տարբերությանը, սակայն ամեն

⁹ https://www.armstat.am/file/article/sv_03_20a_141.pdf

¹⁰ https://www.armstat.am/file/article/sv_03_20a_141.pdf

դեպքում աշխատողները պետք է լինեն զբաղվածների մեջ՝ համաձայն վերոգրյալ սահմանումների:

Աղյուսակ 7. Կազմակերպությունների թիվը, աշխատողների թվաքանակը և աշխատավարձը 2018-19թթ.¹¹

	Կազմակերպությունների թիվը		Աշխատողների թվաքանակը, մարդ			Միջին ամսական աշխատավարձը, դրամ	
	2018թ.	2019թ.	2017թ.	2018թ.	2019թ.	2018թ.	2019թ.
Հունվար	36,493	40,676	494 307	509,934	560,612	165,374	172,827
Փետրվար	37,007	41,391	499 215	522,552	569,275	167,937	172,124
Մարտ	35,625	41,576	510 701	533,822	569,450	167,422	177,222
Ապրիլ	37,988	42,931	516 726	538,317	588,243	166,238	179,002
Մայիս	38,265	43,639	522 298	545,003	596,718	168,639	179,580
Հունիս	38,946	44,290	523 625	558,605	601,524	168,997	179,475
Հուլիս	39,872	44,655	521 250	568,600	603,017	173,475	187,280
Օգոստոս	40,408	44,936	519 750	571,362	602,373	173,961	180,935
Սեպտեմբեր	40,862	45 577	530 339	578,593	614 45	166,104	178 421
Հոկտեմբեր	41,173	45 792	533 141	582,093	620 552	169,216	179 941
Նոյեմբեր	41,468	46 099	535 552	585,895	624,763	169,295	177,647
Դեկտեմբեր	41,651	46 392	530 409	585,352	627 831	213,119	224 517

Աղբյուր՝ ՀՀ ՎԿ

2018թ. միջին ամսական անվանական աշխատավարձը կազմել է 172 727¹² ՀՀ դրամ, իսկ 2019թ.՝ 182 673 ՀՀ դրամ, աճելով 5.8%՝ արձանագրելով ամսական աշխատավարձի՝ նախորդ տարիների միտումներին համահունչ, ոչ էական աճ: Հաշվի առնելով, որ աշխատավարձը սովորաբար վարձու աշխատողների հիմնական եկամուտն է, կարելի է եզրակացնել, որ բնակչության հիմնական մասի եկամուտները էականորեն չեն աճել:

¹¹ https://www.armstat.am/file/article/sv_01_20a_142.pdf

¹² <https://www.armstat.am/am/?nid=12&id=08001>

Աղյուսակ 8. Աշխատողների թվաքանակը 2017-2019թթ., ամիսներով¹³

	Ընդամենը			Պետական			Ոչ պետական		
	2017թ.	2018թ.	2019թ.	2017թ.	2018թ.	2019թ.	2017թ.	2018թ.	2019թ.
Հունվար	494 307	509,549	560,612	201 734	198,200	200,121	292 573	311,349	360,491
Փետրվար	499 215	550,953	569,298	203 707	229,597	201,775	295 508	321,356	367,523
Մարտ	510 701	531,917	569,450	205 833	202,719	201,940	304 868	329,198	367 510
Ապրիլ	516 726	538,317	588,243	208 371	205,819	199,908	308 355	332,498	388,335
Մայիս	522 298	545,003	596,718	208 817	205,750	199,842	313 481	339,253	396,876
Հունիս	523 625	558,605	601,524	207 820	203,373	198,166	315 805	355,232	403,358
Հուլիս	521 250	568,600	603,017	201 360	199,983	196,182	319 890	368,617	406,835
Օգոստոս	519 750	571,362	602,373	198 025	196,957	193,690	321 725	374,405	408,683
Սեպտեմբեր	530 339	578,593	614,459	203 050	202,859	199,070	327 289	375,734	415,389
Հոկտեմբեր	533 141	582,093	620,552	204 471	204,414	200,717	328 670	377,679	419,835
Նոյեմբեր	535 552	585,895	624,763	207 037	206,703	203,584	328 515	379,192	421,179
Դեկտեմբեր	530 409	585,352	627,831	204 173	206,727	205,834	326 236	378,625	421,997

Աղբյուր՝ ՀՀ ՎԿ

Ուշագրավ են նաև աշխատողների՝ ըստ տնտեսության ինստիտուցիոնալ հատվածների թվաքանակի տվյալները: Այսպես, ՀՀ կառավարությունը բազմիցս հայտարարել է, որ պետական հատվածը պետք է օպտիմալացվի և այն աշխատատեղերի ստեղծման աղբյուր չէ: Սակայն, համաձայն պաշտոնական վիճակագրության, 2018 թվականի ապրիլին պետական հատվածում ներգրավված է եղել 205.819 մարդ, իսկ 2019թ. դեկտեմբերին՝ 205.834: Այսինքն՝ օպտիմալացման արդյունքում ոչ միայն պետական աշխատողների թիվը չի նվազել, այլ մի փոքր էլ ավելացել է:

¹³ https://www.armstat.am/file/article/sv_01_20a_142.pdf

Աղյուսակ 9. Գործազրկության ցուցանիշները՝ ըստ զբաղվածության պետական գործակալության տվյալների¹⁴

	2017թ.		2018թ.		2019թ.	
	Աշխատանք փնտրողներ	նրանց թվում՝ գործազուրկներ	Աշխատանք փնտրողներ	նրանց թվում՝ գործազուրկներ	Աշխատանք փնտրողներ	նրանց թվում՝ գործազուրկներ
Հունվար	95 811	80 576	85,295	69,784	81 914	64 618
Փետրվար	96 170	80 950	84,539	69,167	82 426	65 103
Մարտ	96 150	80 709	83,511	68,386	82 718	64 955
Ապրիլ	95 418	79 716	82,590	68,880	83 029	64 647
Մայիս	93 371	78 180	82,412	68,553	82 825	64 128
Հունիս	91 532	76 624	82,759	68,364	82 522	63 400
Հուլիս	90 282	75 452	82,809	67,789	82 820	63 085
Օգոստոս	89 355	74 444	82,660	67,024	83 046	61 966
Սեպտեմբեր	88 609	73 621	82,212	66,401	83 325	61 936
Հոկտեմբեր	88 178	72 777	81,718	65,595	83 463	61 926
Նոյեմբեր	87 121	71 507	81,849	65,136	84 749	62 244
Դեկտեմբեր	85 983	70 236	81,683	64,643	84 982	61 766

Աղբյուր՝ ՀՀ ՎԿ

Գործազրկությունը բնութագրող մեկ այլ ցուցանիշ է նաև ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության (ՀՀ ԱՍՀՆ) աշխատակազմի զբաղվածության պետական գործակալությունում գրանցված գործազուրկների թվաքանակը: Իհարկե, այս ցուցանիշը ցույց չի տալիս երկրում գործազրկության իրական մակարդակը, սակայն այն կարևոր է այն տեսակետից, թե ինչքանով է բնակչությունը, աշխատանք փնտրողները, վստահում պետական մարմինն՝ աշխատանք փնտրելու կամ որևիցե այլ աջակցություն (Զբաղվածության պետական գործակալության աջակցության գործիքների և ծրագրերի վերաբերյալ մանրամասն տե՛ս էջ 36-37) ստանալու հարցում: Վիճակագրությունից երևում է, որ այս առումով միտումները ամբողջությամբ նույնն են,

¹⁴ https://www.armstat.am/file/article/sv_12_19a_141.pdf

և առկա է որոշակի հատված՝ շուրջ 80-85 հազար քաղաքացի, որոնք վստահում և գրանցվում են գործակալությունում:

Ամփոփելով աշխատանքի շուկայի վիճակագրության վերլուծությունը՝ կարելի է փաստել, որ առկա են որոշակի դրական միտումներ: Այսպես, դրական զարգացումներ են արձանագրվել աշխատուժի, աշխատուժից դուրս բնակչության մասով, բավականին բարելավվել են գործազրկության և զբաղվածության մակարդակի ցուցանիշները:

Մյուս կողմից՝ լուրջ փոփոխություններ չեն արձանագրվել աշխատանքային ռեսուրսների, աշխատավարձի, պետական հատվածի աշխատողների թվաքանակի և մշտական բնակչության աճի մասով:

1.2. Զբաղվածության ընդլայնման, նոր աշխատատեղերի ստեղծման ուղղությամբ ՀՀ կառավարության խոստումները, իրականացված քայլերը և արդյունքները

Անցնելով զբաղվածության ընդլայնման, նոր աշխատատեղերի ստեղծման ուղղությամբ ՀՀ կառավարության կողմից իրականացված քայլերի ուսումնասիրությանը՝ նախ հարկ ենք համարում ներկայացնել այն խոստումները, որոնք տրվել էին նոր կառավարության ձևավորման ընթացքում: Հիմնական փաստաթղթերը, որոնցում առկա են վերոհիշյալ խոստումները՝ ՀՀ կառավարության ծրագրերն են՝ 2018 թվականի հունիսի 1-ի թիվ 581-Ա և 2019 թվականի փետրվարի 8-ի թիվ 65-Ա որոշումներով հաստատված (այսուհետ՝ Կառավարության ծրագիր) և « Իմ քայլը» դաշինքի նախընտրական ծրագիրը (այսուհետ՝ Նախընտրական ծրագիր):

Այս ենթագլխում կփորձենք վերլուծել զբաղվածության ընդլայնման, գործազրկության նվազման, նոր աշխատատեղերի ստեղծմանն ուղղված ՀՀ կառավարության քաղաքականությունը հետևյալ տրամաբանությամբ. տրված խոստումներ - իրատեսականություն - իրականացված քայլեր - արդյունքներ:

1.2.1. Զբաղվածության ընդլայնում, նոր աշխատատեղերի ստեղծում

Ուսումնասիրելով ՀՀ կառավարության գործունեության և «Իմ քայլը» դաշինքի նախընտրական ծրագրերը՝ կարելի է արձանագրել, որ զբաղվածությանը, գործազրկությանը, նոր աշխատատեղերին վերաբերող դրույթները հիմնականում չեն պարունակում հստակ և չափելի ցուցանիշներ:

Այնուամենայնիվ, և՛ «Իմ քայլը» դաշինքի նախընտրական ծրագրում, և՛ կառավարության ծրագրում հստակ ընդգծվում են մեծ թվով նոր աշխատատեղեր ստեղծելու, գործազրկությունը էապես նվազեցնելու մտադրությունները և խոստումները.

- **5.1. ՏՆՏԵՍԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՔԱՂԱՔԱՑՈՒՔԱՐԵԿԵՑՈՒԹՅՈՒՆԸ.** Տնտեսական բնագավառում պետությունը պարտավոր է ստեղծել պայմաններ համախառն ազգային արդյունքի ձևավորման գործում, տնտեսական գործունեության ոլորտում առավելագույն թվով մարդկանց ներգրավման համար... **Տնտեսական քաղաքականության նպատակը պետք է դառնա աշխատատեղերի ստեղծումը, աշխատավարձերի բարձրացումը...** Զբաղվածությունը քաղաքացուն պետք է երաշխավորի **արժանապատիվ եկամուտներ:**¹⁵
- **4.2. ԱՂՔԱՏՈՒԹՅԱՆ ՀԱՂԹԱՀԱՐՈՒՄԸ, ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԴԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԺՈՂՈՎՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ.** ...Հաշվի առնելով երկրի մակրոտնտեսական ցուցանիշները, կիրականացվի նվազագույն ամսական աշխատավարձի շարունակական բարձրացում: Կառավարությունը հաստատարակամ է **մինչև 2023 թվականը էապես կրճատելու գործազրկությունը:**¹⁶
- Վերոնշյալ գործողությունները միտված են լինելու հանրապետությունում միջին խավի ձեւավորմանը: **Մասնավորապես՝ մինչև 2023 թվականը... իջեցնելու ենք... գործազրկությունը՝ 5 տոկոսային նիշով:**¹⁷

Վերոհիշյալ խոստումներով հայտարարվում է, որ տնտեսական քաղաքականության նպատակը պետք է դառնա նոր աշխատատեղերի ստեղծումը և աշխատավարձերի բարձրացումը: Այս մասով կարևոր հարց է, թե քանի նոր աշխատատեղ է ստեղծվել, հաշվի առնելով, որ հաճախ պետական պաշտոնյաների կողմից այլ տվյալներ են ներկայացվում, պաշտոնական վիճակագրությունը մեկ այլ տվյալներ է հրապարակում, իսկ որոշ տնտեսագետներ և քաղաքական գործիչներ կասկածներ են հայտնում հայտարարված ցուցանիշների վերաբերյալ:

Հիշեցնենք, որ ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանը¹⁸ 2019թ. ապրիլին ֆեյսբուքյան իր էջում հայտնել էր, որ 2019 թվականի հունվարին 2018 թվականի հունվարի համեմատ 50 հազար 141 աշխատատեղով ավելի է գրանցվել Հայաստանի Հանրապետությունում:

Իսկ 2019թ. դեկտեմբերին վարչապետ Նիկոլ Փաշինյանի կողմից ներկայացրած տեղեկատվության¹⁹ համաձայն՝ «2018 թվականի մայիսի համեմատ 2019 թվականի նոյեմբերի 29-ի դրությամբ Հայաստանում ի հայտ է եկել (ստեղծվել է կամ ստվերից դուրս է եկել) 81 հազար 534 նոր աշխատատեղ:

¹⁵ ՀՀ կառավարության ծրագիր. ՀՀ կառավարության 2019 թվականի փետրվարի 8-ի թիվ 65-Ա որոշում

¹⁶ ՀՀ կառավարության ծրագիր. ՀՀ կառավարության 2019 թվականի փետրվարի 8-ի թիվ 65-Ա որոշում

¹⁷ «Իմ քայլը» դաշինքի նախընտրական ծրագիր. Բաժին 6. Մրցունակ, մասնակցային և ներառական տնտեսություն, Մաս 14 «Սոցիալական պաշտպանության կայուն համակարգ»

¹⁸ <https://www.azatutyun.am/a/29905830.html>

¹⁹ <https://medialab.am/33034/>, <https://armeniasputnik.am/armenia/20191210/21374052/qani-ashxatatex-e-stveric-durs-ekel-nikol-pashinyany-nor-tver-e-hraparakel.html>

Արդեն 2020թ. հունվարին վարչապետ Նիկոլ Փաշինյանը²⁰ 100 փաստի շարքում ներկայացրել է, որ 2019թ. վերջի դրությամբ, 2018-ի մայիսի համեմատությամբ, Հայաստանում ի հայտ են եկել (նոր ստեղծված կամ ստվերից դուրս եկած) 81.534 նոր աշխատատեղեր:

Նախ, նշենք, որ ըստ պաշտոնական վիճակագրության՝ **գբաղվածների միջին տարեկան թիվը 2017թ. կազմել է 903.3 հազ. մարդ, 2018թ.՝ 907.5 հազ. մարդ, իսկ 2019թ.՝ 946.8 հազ. մարդ:** Հարկ է նշել, որ այս ցուցանիշը ներկայացվում է ոչ միայն տարեկան, այլ նաև եռամսյակային կտրվածքով, սակայն ունի սեզոնային տատանողականություն և եռամսյակից եռամսյակ գբաղվածների թիվը կարող է էականորեն տատանվել: Այս պատճառով ՀՀ ՎԿ ներկայացնում է նաև միջին տարեկան ցուցանիշը: Այս ցուցանիշի համաձայն, 2018թ. համեմատ, 2019-ին գբաղվածների թիվը **աճել է շուրջ 39 հազարով:**

Մյուս պաշտոնական ցուցանիշը՝ աշխատողների թվաքանակն է, որի աղբյուրը ՀՀ ՎԿ համար հանդիսանում է **ՀՀ ՊԵԿ եկամտային հարկի և սոցիալական վճարի անձնավորված հաշվառման տվյալների բազան** (մանրամասն տե՛ս 1.1. ենթագլխում և Հավելված 1-ում): Համաձայն այս տվյալների՝ **աշխատողների թիվը 2017թ. դեկտեմբերի վերջին կազմել է 530 409 մարդ, 2018թ.՝ 585 352 մարդ, իսկ 2019թ.՝ 627 831 մարդ:** Այս ցուցանիշի համաձայն՝ 2018-ի համեմատ 2019-ին գբաղվածների թիվը **աճել է շուրջ 42.5 հազարով:**

Համաձայն ՀՀ ՎԿ տվյալների (տե՛ս Հավելված 3)՝ 2019թ. ընթացքում **նոր ստեղծված աշխատատեղերի ընդհանուր թվաքանակը կազմել է 44.6 հազ.**, միաժամանակ, նույն ժամանակահատվածում **կրճատված աշխատատեղերի թվաքանակը կազմել է՝ 40.8 հազ.**, այսինքն՝ **զուտ փոփոխությունը կազմել է շուրջ 4 հազ.:**

Նոր ի հայտ եկած աշխատատեղերը բացահայտող մեկ այլ ցուցանիշ կարող է հանդիսանալ Զինծառայողների ապահովագրության հիմնադրամի (այսուհետ՝ Հիմնադրամ) տվյալները²¹: Այսպես, Հիմնադրամի հաշվետվությունների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ 2018թ. ապրիլ ամսին կատարվել է **502 մլն 32 հազար դրամի պարտադիր վճարներ**, իսկ 2019 հունվարին՝ **480 մլն 153 հազար դրամի** վճարներ: Պարզ տրամաբանությամբ կարելի է փաստել, որ ապրիլին կատարվել է վճարում շուրջ 502 հազար աշխատակցի համար, 2019թ. հունվարին՝ շուրջ 480 հազար աշխատակցի համար: Արդեն 2019թ. դեկտեմբերին վճարները կազմել են 619 մլն 134

²⁰ <https://www.primeminister.am/hy/interviews-and-press-conferences/item/2020/01/25/Nikol-Pashinyan-Press-Conference/>, <https://www.1lurer.am/hy/2020/01/25/2019>

²¹ Սույն վերլուծության շրջանակներում պաշտոնապես դիմել ենք Հիմնադրամ՝ վերջին տարիներին Հիմնադրամին փոխանցված պարտադիր վճարների տվյալները ճշտելու համար, սակայն պատասխան չենք ստացել:

հազար դրամ, այն դեպքում, երբ համաձայն ՊԵԿ տվյալների՝ 2019թ. դեկտեմբերին առկա է եղել գրանցված և հարկ վճարող շուրջ 627 հազար աշխատող:

Աղյուսակ 10. Զինձառայողների ապահովագրության հիմնադրամի դրոշմանիշային վճարները 2018-19թթ., ՀՀ դրամ²²

	2018	2019
Հունվար	484,997,000	480,153,000
Փետրվար	493,483,000	535,632,000
Մարտ	491,198,000	563,862,000
Ապրիլ	502,032,000	593,621,000
Մայիս	493,968,000	601,762,000
Հունիս	447,045,000	606,468,000
Հուլիս	527,019,000	606,844,000
Օգոստոս	522,688,000	605,012,000
Սեպտեմբեր	512,017,000	615,797,000
Հոկտեմբեր	498,831,000	619,532,000
Նոյեմբեր	495,383,000	621,323,000
Դեկտեմբեր	471,123,000	619,134,000

Հարկ է նշել, որ վերոհիշյալ անհամապատասխանության վերաբերյալ ՀՀ ՊՆ-ն հրապարակել է պարզաբանում, որի համաձայն ²³՝ Զինձառայողների ապահովագրության հիմնադրամի և ՊԵԿ-ի տվյալների տարբերությունը պայմանավորված է ՊԵԿ-Հիմնադրամ դրոշմանիշային վճարների, ինչպես նաև դրանց վերաբերյալ ցուցակների փոխանցման գործող սկզբունքով: Վերոհիշյալը նաև բացատրվում է մի օրինակով. մասնավորապես 10 աշխատակից ունեցող ընկերության

²² <https://www.1000plus.am/hy/tnoreni-hashvetvutyun>

²³ <https://armenpress.am/arm/news/1014471.html>

դեպքում, ենթադրենք, հունվար ամսին գործատուն 9.000 դրամ է փոխանցում գանձապետական հաշվեհամարին: Միննույն ժամանակ նույն ամսվա համար էլեկտրոնային եղանակով եկամտային հարկի հաշվետվություն է ներկայացնում 10 աշխատակցի համար: Այս պարագայում 9.000 դրամը չի փոխանցվում Հիմնադրամին, քանի որ հնարավոր չէ պարզել, թե կոնկրետ որ աշխատակցի համար չի վճարվել դրոշմանիշային վճարը (դրոշմանիշային վճարը գործատուն կատարում է ոչ թե անհատապես, այլ մեկ թվով՝ միանվագ վճարելով 1.000 դրամ մեկ աշխատակցից սկզբունքով): Փետրվար ամսին նույն գործատուն վճարում է 15.000 դրամ և նորից ներկայացնում եկամտային հարկի հաշվետվություն 10 աշխատակցի համար: Այս պարագայում գանձապետական հաշվից Հիմնադրամին փոխանցվում է 20.000 դրամ, իսկ ավել 4.000 դրամը շարունակում է մնալ գանձապետական հաշվին: Սակայն պարզաբանումից պարզ չէ, թե ինչու են ընկերությունները այսպիսի ոչ ճշգրիտ վարքագիծ դրսևորում (նույն թվով աշխատակիցների դեպքում՝ մե՛րթ շատ են փոխանցում, մե՛րթ քիչ) ոչ մեծ գումարներ հարկային մարմիններ փոխանցելիս:

Ինչ վերաբերում է ՀՀ վարչապետի նշված թվերին, ապա առաջին դեպքում համեմատվում է 2018թ. հունվարը 2019թ. հունվարի հետ (ինչը կարելի է համարել նորմալ նմանատիպ ցուցանիշների համեմատության տեսակետից), իսկ մյուս երկու դեպքերում համեմատվում է 2019 թվականի հոկտեմբերը և նոյեմբերը 2018 թվականի մայիսի համեմատ (կարծում ենք՝ որպես իշխանափոխության ժամկետ): Եթե համեմատենք 2019թ. հունվարը 2018 թվականի մայիսի հետ (քանի որ նշվել էր, որ 2019թ. հունվարին «հեղափոխությունից» սկսած 50141 նոր աշխատատեղ է ստեղծվել), ապա **աճը կկազմի ընդամենը 15.6 հազար** (տե՛ս աղյուսակ 7):

Այնուամենայնիվ, համարելով նորմալ համեմատություն տարբեր տարիների նույն ժամանակահատվածների միջև (հաշվի առնելով սեզոնայնությունը և այլ գործոնները, օրինակ՝ 2019թ. դեկտեմբերին նոյեմբերի համեմատ աշխատողների թիվը նվազել է, տե՛ս աղյուսակ 7), կտեսնենք, որ հոկտեմբերը՝ հոկտեմբերի և նոյեմբերը՝ նոյեմբերի նկատմամբ **աճը կազմել է նույն շուրջ 40 հազարը**: Ինչպես տեսնում ենք, ոչ պաշտոնական վիճակագրությունում առկա է որոշակի «խաղ» թվերի հետ: Հարկ է նշել նաև, որ այդ տրամաբանությամբ արդեն 2020թ. հունվարին գրանցված աշխատողների թիվը կազմել է 604 740՝ 2019թ. դեկտեմբերի 627 831 փոխարեն:

Ինչ վերաբերում է ի հայտ եկած աշխատատեղերի նոր կամ ստվերից դուրս եկած լինելու հանգամանքին, համարում ենք, որ այդ աշխատատեղերի գերակշիռ մասը չգրանցված աշխատողների ստվերից դուրս բերման հաշվին է, քանի որ, նախ, զբաղվածների մեծ մասը ավելացել է աշխատուժից դուրս գտնվող բնակչության հաշվին: Այս դեպքում դժվար է պատկերացնել, որ նոր ստեղծված աշխատատեղերում (նոր ստեղծված կազմակերպությունում կամ առավել ևս՝ ընդլայնվող ընկերությունում) կներգրավվեն հետազոտվող ժամանակաշրջանում **չաշխատող և աշխատանք չփնտրող**

քաղաքացիները (տե՛ս աշխատուժից դուրս գտնվող բնակչության սահմանումը, Հավելված 1), ինչպես նաև չպետք է մոռանալ, որ նոր ստեղծված և կրճատված աշխատատեղերի զուտ փոփոխությունը 2019թ. կազմել է շուրջ 4 հազ.: Մյուս կողմից՝ այս փաստը չի հերքվում ո՛չ պետության, ո՛չ էլ անկախ մասնագետների կողմից:

Ստվերից դուրս եկած աշխատատեղերի վերաբերյալ դիմել ենք նաև ՀՀ ՊԵԿ, սակայն ստույգ տվյալներ չեն տրամադրվել:

Այս կապակցությամբ մեկ այլ պարզաբանման կարիք ունի ՀՀ ՎԿ կողմից «Արդյունաբերական կազմակերպությունների հիմնական ցուցանիշներն ըստ տնտեսական գործունեության երկնիշ դասակարգման» վիճակագրական տեղեկագրում 2019թ. համար անձնակազմի միջին ցուցակային թվաքանակի և արտադրողականության ցուցանիշները չիրապարակելը (չնայած նրան, որ նախկինում միշտ հրապարակվել են): Այս ցուցանիշը կարող էր ցույց տալ ոլորտում առկա աշխատողների քանակը, ինչպես նաև պարզ թվաքանակյան գործողությամբ կերևար՝ արդյո՞ք ոլորտում ավելացված աշխատողները ստվերից դուրս եկած են, թե՞ նոր ստեղծված (կարծում ենք, որ նոր ստեղծվող աշխատատեղերը չէին կարող հիմնականում լինել արտադրողականության նվազման հաշվին):

Այնուամենայնիվ, չնայած նրան, որ ստվերից դուրս եկած աշխատատեղերը կարող են դրական ազդեցություն ունենալ կարճաժամկետ հատվածում պետական բյուջեի մուտքերի վրա, ամեն դեպքում կապ չունեն մեր ուսումնասիրության բուն թեմայի՝ զբաղվածության խթանման և գործազրկության դեմ պայքարի հետ, ինչպես նաև չեն ավելացնում տնտեսական ակտիվությունը:

Ինչ վերաբերում է գործազրկության կրճատմանը, ապա Կառավարության ծրագրում խոստացվել է կրճատել այն էապես, իսկ նախընտրական ծրագրում՝ 5 տոկոսային նիշով: Այս պարագայում դժվար է կանխատեսել, թե որքան է էապես կրճատումը, այնուամենայնիվ 2018թ. գործազրկության մակարդակը կազմել է 20.5% (բարելավումը՝ 0.3 տոկոսային կետ), իսկ 2019թ.՝ 18.9% (բարելավումը՝ 1.6 տոկոսային կետ): Արդյոք կհաջողվի՞ 2023թ. էապես կամ գոնե 5 տոկոսային կետով կրճատել գործազրկությունը, դժվար է ասել, սակայն կարծում ենք, որ դա, ցավոք, քիչ հավանական է (հաշվի առնելով վերոհիշյալ փաստերը, ինչպես նաև COVID-19 համավարակի ազդեցությունը):

Ինչ վերաբերում է աշխատավարձերի բարձրացմանը և արժանապատիվ եկամուտներին, ապա միջին ամսական աշխատավարձը 2018թ. կազմել է 172.727 դրամ՝ նախորդ տարվա համեմատ աճելով 4%-ով, իսկ 2019թ.՝ 182.763 դրամ՝ աճելով 5.8%-ով: Հաշվի առնելով նաև գնաճի մակարդակը, իրական աշխատավարձի աճը ավելի փոքր է: Հարկ է նշել նաև, որ համանման տոկոսներով անվանական աշխատավարձը աճել է բոլոր վերջին տարիներին: Սակայն մի այլ բան է հատկանշական՝ 2019թ. աշխատավարձի հիմնական աճը գրանցվել է պետական հատվածում՝ 8.4%: Համեմատության համար նշենք, որ 2017-ին պետական հատվածի աշխատավարձի աճը

կազմել է 0.5%: Այս կտրվածքով, կարելի է արձանագրել, որ աշխատավարձի բարձրացումը և արժանապատիվ եկամուտների ապահովումը որոշ չափով կատարվել է պետական հատվածի որոշ աշխատողների համար:

Ամփոփելով՝ կարելի է փաստել, որ ուսումնասիրվող ժամանակահատվածում զբաղվածությունը ընդլայնվել է, իսկ գործազրկությունը բավականին կրճատվել է՝ ի հաշիվ ի հայտ եկած նոր (հիմնականում սովերից դուրս եկած) աշխատատեղերի: Սակայն, բուն զբաղվածության խթանման և գործազրկության դեմ պայքարի տեսակետից արձանագրված արդյունքները չի կարելի համարել բավարար: Հաշվի առնելով համաշխարհային և ներքին տնտեսական վերջին զարգացումները՝ դեռևս դժվար է կանխատեսել՝ կհաջողվի՞ արդյոք Կառավարությանը հասնել հայտարարված թիրախին՝ մինչև 2023թ. էապես կամ 5 տոկոսային կետով կրճատել գործազրկությունը: Աշխատավարձերի մասով առկա է որոշակի բարձրացում, սակայն վերջին մի քանի տարիների համեստ միտումներին համապատասխան, որոշակի բարելավում կարելի է համարել պետական հատվածի աշխատավարձերի շուրջ 8.4% աճը:

- **5.3. ՄՐՑՈՒՆԱԿ ԵՎ ՄԱՍՆԱԿՑԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆԸ.** *Տնտեսական քաղաքականության հիմքում լինելու է արտահանմանը, զբաղվածության ընդլայնմանը, աշխատանքի քաջալերմանը միտված ներդրումային քաղաքականությունը²⁴:*
- **5.2. Աղքատության հաղթահարում, սոցիալական աջակցություն.** *Արժանապատիվության և երջանկության զգացողության մեջ առաջնային նշանակություն ունի սոցիալական ապահովությունը: Այս առումով կառավարության համար գերակա է լինելու բնակչության կենսամակարդակի էական բարելավումը, զբաղվածության շարունակական աճը... Այս իմաստով կառավարությունը համոզված է, որ 2018 թվականի ապրիլ-մայիս ամիսներին Հայաստանում տեղի ունեցած ոչ բռնի, թավշյա, ժողովրդական հեղափոխությունը տնտեսական և ներդրումային դրական սպասումներ է առաջացրել: Քաղաքական կայունության պահպանման պայմաններում դրական սպասումները մեծ հավանականությամբ վերածվելու են ներդրումային հոսքի, և կառավարությունը մտադիր է ներդրումներն ուղղորդել դեպի մարզեր և քաջալերել առավել մեծ թվով նոր աշխատատեղեր ստեղծելուն միտված ներդրումները...²⁵*

Համաձայն այս դրույթի՝ տնտեսական քաղաքականության հիմքում դրվում է ներդրումային քաղաքականությունը, որը միտված կլինի նաև զբաղվածության ընդլայնմանը. ներդրումները ուղղորդվելու են մարզեր և ստեղծվելու է առավել մեծ թվով աշխատատեղեր: Նախ, տնտեսական քաղաքականության վերաբերյալ վերևում արված մեր ենթադրությունը ամրապնդվում է այստեղ, քանի որ հենց կառավարությունն է արձանագրում, որ տնտեսական քաղաքականության հիմքում լինելու է ներդրումային

²⁴ ՀՀ կառավարության ծրագիր. ՀՀ կառավարության 2019 թվականի փետրվարի 8-ի թիվ 65-Ա որոշում:

²⁵ ՀՀ կառավարության ծրագիր. ՀՀ կառավարության 2018 թվականի հունիսի 1-ի թիվ 581-Ա որոշում:

քաղաքականությունը: Այստեղ մենք չենք անդրադառնա ներդրումային քաղաքականությանը (կամ դրա բացակայությանը), քանի որ **ներդրումային քաղաքականության** վերաբերյալ «Լույս» հիմնադրամի և Տնտեսական հետազոտությունների և զարգացման աջակցության կենտրոնի կողմից կատարվել է առանձին վերլուծություն, որին ընթերցողը կարող է ծանոթանալ հետևյալ հղումով²⁶:

1.2.2. Զբաղվածության կարգավորման ինստիտուցիոնալ շրջանակը

Գործազրկության, զբաղվածության միտումները վերլուծելիս մեկ այլ կարևոր գործոն է աշխատանքային հարաբերությունները կարգավորող օրենսդրական շրջանակը, աշխատողների անվտանգության և իրավունքների պաշտպանությունը և գործազուրկներին աշխատանքի որոնման հարցում աջակցությունը: Այս մասով նույնպես իշխող ուժի կողմից կատարվել է անդրադարձ կառավարության և նախընտրական ծրագրերում:

- > **4.2. ԱՂՔԱՏՈՒԹՅԱՆ ՀԱՂԹԱՀԱՐՈՒՄԸ, ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԺՈՂՈՎՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ.** ...Արժանապատիվ աշխատանքի իրավունքի իրականացման նպատակով շարունակաբար կպարզեցվեն աշխատանքային հարաբերությունների կարգավորման մեխանիզմները, կհամապատասխանեցվեն միջազգային պայմանագրերով ամրագրված պահանջներին,Աշխատողների իրավունքների պաշտպանության համակարգի ինստիտուցիոնալ, գործառնական և իրավական հիմքերի հետագա բարեփոխումների համապատասխան կապահովվի **աշխատանքային օրենսդրության պահանջների կատարման նկատմամբ ամբողջական և արդյունավետ վերահսկողության համակարգի ներդրումը, կդիտարկվի արհմիությունների դերի բարձրացումը:**²⁷
- > «Սոցիալական արդարությունը վերականգնելու, հասարակության բոլոր խմբերին վերահինգրեցելու եւ համերաշխ ու հոգաբար հանրություն կերպելու ճանապարհին ապահովելու ենք մարդկանց համար հավասար հնարավորություններ... զբաղվածության արդյունավետ քաղաքականության մշակման... միջոցով:
 1. **Ոլորտում մեզ համար գերակա է լինելու ակտիվ աշխատաշուկայի քաղաքականության վարումը, ...գործազուրկների հմտությունների եւ կարողությունների զարգացումը, աջակցությունն աշխատանքի որոնման աշխատանքներում եւ աշխատանքային նոր հնարավորությունների ստեղծումը:ինչը նաեւ ուղեկցվելու է **Զբաղվածության պետական գործակալության բարեփոխմամբ:** Կարելի է նաեւ աշխատանքային իրավունքների պաշտպանությանն ուղղված միջոցառումների իրականացումը:**²⁸

²⁶ <https://www.luys.am/index.php?m=publicationsOne&pid=138>
²⁷ ՀՀ կառավարության ծրագիր. ՀՀ կառավարության 2019 թվականի փետրվարի 8-ի թիվ 65-Ա որոշում:
²⁸ «Իմ քայլը» դաշինքի նախընտրական ծրագիր. Բաժին 6. Մրցունակ, մասնակցային և ներառական տնտեսություն, Մաս 14 «Սոցիալական պաշտպանության կայուն համակարգ», կետ 1:

Հարկ է նշել, որ վերոհիշյալ ոլորտում առկա է երկու ինստիտուցիոնալ կառույց՝ ՀՀ առողջապահական և աշխատանքի տեսչական մարմինը (ՀՀ ԱԱՏՄ) և ՀՀ ԱԱՀՆ աշխատակազմի Զբաղվածության պետական գործակալությունը:

Մինչև վերջերս (ս.թ. հուլիսի 3-ը) ՀՀ ԱԱՏՄ խնդիրներն սահմանափակվում էին միայն աշխատատեղերում աշխատողների առողջության պահպանման և անվտանգության ապահովման վերաբերյալ ՀՀ օրենսդրության պարտադիր պահանջների նկատմամբ վերահսկողության իրականացմամբ: Մարմնի լիազորություններում և գործառույթներում բացակայում էին աշխատողների աշխատանքային իրավունքների պաշտպանության հիմնական բաղադրիչները: Բացակայում էին աշխատողների վարձատրության, աշխատաժամանակի (ներկայումս շատ արդիական են չվարձատրվող արտաժամյա աշխատանքների պարտադրման հետ կապված չարաշահումները, այդ թվում՝ պետական համակարգում), ինչպես նաև աշխատողների անհարկի ազատումների կանխարգելման հետ կապված գործառույթները:

Հիշեցնենք, որ Հայաստանը միացել է Աշխատանքի միջազգային կազմակերպության (ԱՄԿ) բազմաթիվ կոնվենցիաների և ստանձնել համապատասխան պարտավորություններ, այդ թվում՝ աշխատանքային իրավունքների արդյունավետ իրացման և աշխատանքային իրավունքների պաշտպանությունն ապահովող վերահսկողական համակարգ ստեղծելու մասով: Օրինակ, ԱՄԿ Աշխատանքի տեսչության մասին կոնվենցիայի²⁹ (Labour Inspection Convention, 1947 (No. 81) 3-րդ հոդվածի համաձայն՝ աշխատանքի տեսչական համակարգի գործառույթների մեջ են մտնում նաև աշխատանքային իրավունքների պաշտպանության նկատմամբ վերահսկողություն այնպիսի հարցերում, ինչպիսիք են աշխատաժամանակի, վարձատրության, երեխաների և երիտասարդների զբաղվածությանը վերաբերող պայմանների պահպանման նկատմամբ վերահսկողությունը:

Հարկ է նշել, որ ՀՀ վարչապետի 2020թ. հուլիսի 3-ի թիվ 768-Լ որոշմամբ փոփոխություններ են կատարվել ՀՀ ԱԱՏՄ կանոնադրության մեջ, որով որոշակիորեն ընդլայնվել են մարմնի լիազորություններն աշխատանքային իրավունքների և աշխատանքային օրենսդրության, կոլեկտիվ և աշխատանքային պայմանագրերի պահանջների պահպանման վերահսկողության մասով: Որոշակի ժամանակ հետո հնարավոր կլինի գնահատել ԱԱՏՄ նոր լիազորությունների մասով իրականացված աշխատանքները, այդ թվում՝ կապված նոր գործառույթների մասով ստուգաթերթերի մշակման և հաստատման, ինչպես նաև ստուգումների իրականացման հետ:

Որոշակի խնդիրներ են առկա նաև, տեսչական մարմնի կողմից եղած լիազորությունների մասով՝ ստուգումների կազմակերպման և անցկացման

²⁹ https://www.ilo.org/dyn/normlex/en/f?p=NORMLEXPUB:12100:0::NO::P12100_ILO_CODE:C081

ընթացակարգի համաձայն ստուգումների անցկացումն ապահովող ստուգաթերթերի հաստատման հետ:

Ինչ վերաբերում է աշխատողների անհարկի ազատումներին (հատկապես, պետական համակարգում), ապա այս հարցը մնացել է բաց: Աշխատողների իրավունքների պաշտպանությունը թողնվել է դատարանի վրա, որը մի կողմից գերծանրաբեռնված է, մյուս կողմից դժվարությամբ է որոշումներ կայացնում խոշոր ընկերությունների կամ պետության դեմ: Միաժամանակ, քայլեր չեն ձեռնարկվել արհմիությունների դերի մեծացման ուղղությամբ, չեն կատարվել օրենսդրական բարեփոխումներ, որոնք կնպաստեին աշխատողների պաշտպանվածության բարձրացմանը:

Մեկ այլ ինստիտուցիոնալ մարմին է ՀՀ ԱՍՀՆ աշխատակազմի Ջբաղվածության պետական գործակալությունը: Գործակալության բարեփոխմամբ ոլորտում պետք է վարվեր ակտիվ աշխատաշուկայի քաղաքականություն, որով կխթանվեր գործազուրկների հմտությունների և կարողությունների զարգացումը, աջակցությունն աշխատանքի որոնման հարցում և այլն: Մեր տեղեկություններով գործակալությունում, առաջին հերթին, օրենսդրական կամ գործառության բարեփոխումներ չեն իրականացվել: Իսկ կադրային որոշ փոփոխությունները միջազգային պրակտիկայում ընդունված չէ համարել բարեփոխում: Վերջինիս մասին են վկայում նաև գործակալությունում գործազուրկների վերաբերյալ սույն վերլուծության 1.1 ենթագլխում ներկայացված վիճակագրական տվյալները: Իհարկե, այս տվյալները ցույց չեն տալիս երկրում գործազրկության իրական մակարդակը, սակայն կարևոր են այն տեսակետից, թե ինչքանով են բնակչությունը, աշխատանք փնտրողները վստահում պետական մարմնին՝ աշխատանք փնտրելու կամ իրենց անհրաժեշտ աջակցությունը ստանալու գործընթացում, այսինքն՝ զբաղվածության պետական գործակալություն դիմում են հիմնականում այն մարդիկ, որոնք հույս ունեն, որ կստանան ակնկալվող աջակցությունը: Վիճակագրությունից երևում է, որ այս առումով միտումները ամբողջությամբ նույնն են ինչ նախորդ տարիներին և առկա է բնակչության որոշակի հատված՝ շուրջ 80-85 հազար քաղաքացի, որոնք վստահում և գրանցվում են գործակալությունում:

Ամփոփելով՝ կարելի է փաստել, որ աշխատողների իրավունքների պաշտպանության և տեսչական մարմնի բարեփոխման մասով որոշակի քայլեր կատարվել են գոնե օրենսդրական մասով, վերջերս փոփոխություններ են կատարվել ԱՍՏ կանոնադրությունում, որով որոշակիորեն ընդլայնվել են մարմնի լիազորությունները աշխատանքային իրավունքների և աշխատանքային օրենսդրության, կոլեկտիվ և աշխատանքային պայմանագրերի պահանջների պահպանման վերահսկողության մասով: Ինչ վերաբերում է դրա իրականացմանը պրակտիկայում, ապա դեռ վաղ է գնահատականներ տալ:

Մյուս կողմից՝ ՀՀ ԱՍՀՆ աշխատակազմի Ջբաղվածության պետական գործակալությունում, առաջին հերթին, օրենսդրական կամ գործառույթային բարեփոխումներ չեն իրականացվել:

Այս մասով խոստումները կարելի է համարել դեռևս չկատարված:

ՄԱՍ 2. ԱՂՔԱՏՈՒԹՅԱՆ ՀԱՂԹԱՀԱՐՄԱՆ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԻ ԼՈՒԾՄԱՆՆ ՈՒՂԴՎԱԾ ՊԵՏԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

2.1. Աղքատություն և սոցիալական ոլորտ. հաշվարկման մեթոդաբանությունը, վիճակագրությունը, սոցիալական միջոցառումները

Համաձայն ՀՀ ՎԿ կողմից կիրառվող մեթոդաբանության.³⁰

Աղքատ են համարվում նրանք, որոնց սպառումը մեկ չափահաս անձի հաշվով ցածր է աղքատության ընդհանուր վերին գծից, իսկ **ծայրահեղ աղքատ** համարվում են նրանք, որոնց սպառումը մեկ չափահաս անձի հաշվով ցածր է պարենային (կամ ծայրահեղ) աղքատության գծից:

Աղքատության խորության տոկոսային գնահատականը ցույց է տալիս, որ եթե երկիրը հնարավորություն ունենար յուրաքանչյուր անհատի հաշվով (և՛ աղքատ, և՛ ոչ աղքատ) համախմբելու աղքատության գծի այդ տոկոսին համարժեք ռեսուրսները, և եթե այդ ռեսուրսները հատկացվեին աղքատներին, ապա աղքատությունը տեսականորեն կվերացվեր, ենթադրելով, որ աղքատներին ուղղված աջակցությունն ամբողջությամբ հատկացվում է աղքատներին:

Աղքատության սրությունը ցույց է տալիս աղքատների միջև եղած անհավասարությունը. այն հաշվի է առնում, որ որոշ աղքատների սպառումը շատ է հեռու աղքատության գծից, իսկ որոշ աղքատների սպառումը շատ է մոտ աղքատության գծին:

Բնակչության բարեկեցության, կենսամակարդակի գնահատման կարևոր քանակական ցուցանիշ է համարվում տվյալ երկրում **աղքատության մակարդակը**: 2018-ին աղքատության մակարդակը Հայաստանում կազմել է 23.5%՝ 2017թ.-ի համեմատ՝ արձանագրելով աղքատության մակարդակի նվազում 2.2 տոկոսային կետով: Սա նշանակում է, որ երկրի բնակչության մոտ ամեն չորրորդը ամսական 42 621 ՀՀ դրամ վերին աղքատության գծից ցածր է գտնվել:

Ջինի գործակիցը ցույց է տալիս եկամուտների անհավասարաչափ բաշխումը հարուստ և աղքատ խավերի միջև: Եթե գործակիցը ձգտում է 0-ի, ապա եկամուտները հավասարաչափ են բաշխվում, իսկ եթե ձգտում է 1-ի՝ ծայրահեղ անհավասար:

³⁰ <https://www.armstat.am/file/doc/99516748.pdf>

Աղյուսակ 11. Աղքատությունը նկարագրող ցուցանիշները ՀՀ-ում, 2016-18թթ.³¹

	2016	2017	2018
Աղքատության մակարդակը, %	29.4	25.7	23.5
<i>որից՝ ծայրահեղ աղքատության մակարդակը, %</i>	1.8	1.4	1.0
Աղքատության խորություն, %	4.3	4.4	4.2
Աղքատության սրություն, %	1.1	1.2	1.1
Զինի գործակից՝			
<i>ըստ եկամուտների անհավասարության</i>	0.375	0.359	0.360
<i>ըստ սպառման անհավասարության</i>	0.286	0.289	0.298

Աղբյուր՝ ՀՀ ՎԿ

Աղյուսակ 12. Աղքատությունը քաղաքային և գյուղական բնակավայրերում, 2016-2018թթ.³²

	2016	2017	2018
Աղքատության մակարդակը	29.4	25.7	23.5
<i>որից՝ ծայրահեղ աղքատության մակարդակը</i>	1.8	1.4	1.0
Աղքատության մակարդակը քաղաքային բնակավայրերում	28.8	25.0	24.9
<i>որից՝ ծայրահեղ աղքատության մակարդակը</i>	2.0	1.2	1.0
Աղքատության մակարդակը գյուղական բնակավայրերում	30.4	26.8	21.3
<i>որից՝ ծայրահեղ աղքատության մակարդակը</i>	1.4	1.9	0.9

Աղբյուր՝ ՀՀ ՎԿ

³¹ https://www.armstat.am/file/article/f_sec_1_2020_5.pdf

³² https://www.armstat.am/file/article/f_sec_1_2020_5.pdf

Աղյուսակ 13. Աղքատության գծերը, 2016-18թթ.³³

		2016	2107	2018
Ծայրահեղ (պարենային) աղքատության գիծ	դրամ	23 313	24 268	24 827
	ԱՄՆ դոլար	48.5	50.3	51.4
Աղքատության ընդհանուր գիծ	դրամ	40 867	41 612	42 621
	ԱՄՆ դոլար	85.1	86.2	88.2

Աղբյուր՝ ՀՀ ՎԿ

2.2. Աղքատության հաղթահարման և սոցիալական խնդիրների լուծմանն ողջված ՀՀ կառավարության խոստումները, իրականացված քայլերը և արդյունքները

Այս ենթագլխում կվերլուծվի աղքատության հաղթահարմանը և սոցիալական խնդիրների լուծմանն ողջված ՀՀ կառավարության կատարած քայլերը և նախաձեռնած ծրագրերը՝ հետևյալ տրամաբանությամբ. տրված խոստումներ - իրականացված քայլեր - արդյունքներ: Ի՞նչ է սա նշանակում. նախ կներկայացնենք խոստումները, այնուհետև նպատակահարմարության դեպքում՝ արդյո՞ք այդ խոստումները ի սկզբանե իրատեսական էին և ի վերջի ինչ է իրականացվել, ինչ քայլեր (ծրագրեր) են կատարվել:

2.2.1. Աղքատության մակարդակը

Անցնելով աղքատության հաղթահարման մասով ՀՀ կառավարության խոստումներին՝ նախ պետք է նշենք, որ այս դեպքում վերջիններս ունեն թվային արտահայտություն: Ըստ կառավարության՝ մինչև 2023թ. աղքատության մակարդակը պետք է նվազի 10 տոկոսային նիշով, իսկ ծայրահեղ աղքատությունը պետք է վերացվի:

- **Քաժին 4. ԱԶԱՏ, ԱՐԺԱՆԱՊԱՏԻՎ ԵՎ ԵՐՁԱՆԻԿ ՔԱՂԱՔԱՑԻՆ, Մաս 4.2 ԱՂՔԱՏՈՒԹՅԱՆ ՀԱՂԹԱՀԱՐՈՒՄԸ, ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԺՈՂՈՎՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ.**

«Քաղաքացիների կենսամակարդակը և սոցիալական վիճակը բարելավելու, սոցիալական իրավունքների լիարժեք և արդյունավետ իրականացնելու Կառավարության քաղաքականությունը հիմնված է լինելու հավասար հնարավորությունների և

³³ https://www.armstat.am/file/article/f_sec_1_2020_5.pdf

աշխատանքի քաջալերման սկզբունքի վրա: **Աղքատության հաղթահարման առաջնային գործիքն աշխատանքն է, աշխատանքի համար իրական հնարավորությունների սրեղծումը: Կառավարությունը նպատակադրվել է մինչև 2023 թվականը վերացնել ծայրահեղ աղքատությունը, էապես նվազեցնել աղքատությունը**³⁴:

- **Վերոհիշյալ գործողությունները միաված են լինելու հանրապետությունում միջին խավի ձեւավորմանը: Մասնավորապես՝ մինչև 2023 թվականը աղքատությունը իջեցնելու ենք առնվազն 10 տոկոսային նիշով՝ վերացնելով ծայրահեղ աղքատությունը...:**³⁵

Ուսումնասիրելով աղքատության վերջին տարիների ցուցանիշները՝ պետք է արձանագրենք, որ **2018թ. աղքատության մակարդակը կազմել է 23.5%** և 2016թ. համեմատ նվազել է 5,9%, որից 2017թ. այն նվազել է 3,7%, իսկ 2018թ.՝ 2.2%: Ծայրահեղ աղքատության ցուցանիշը 2018թ. կազմել է 1.0% և 2016թ. համեմատ նվազել է 0.8% (0.4-ական տոկոս՝ յուրաքանչյուր տարի): Ցավոք, 2019թ. տվյալները դեռևս առկա չեն և հնարավոր չէ ստույգ գնահատական տալ ներկա իրավիճակի վերաբերյալ: Ինչևհետեւ, համաձայն խոստման, 2023թ. աղքատության մակարդակը պետք է հասնի 13.5%, ինչը, հաշվի առնելով նաև COVID-19 համավարակի ազդեցությունը, խիստ խնդրահարույց է դառնում:

Հարկ է նշել նաև, որ համաձայն Համաշխարհային բանկի (ՀԲ) տվյալների³⁶ (դիտարկել ենք աղքատության մակարդակը ազգային աղքատության գծերի նկատմամբ, (բնակչության %-ը)՝ Poverty headcount ratio at national poverty lines (% of population) աղքատության շուրջ 13-15% և ավելի արձանագրվում է այնպիսի երկրներում, ինչպիսիք են Խորվաթիան (19.5%), Լեհաստանը (17.3%), Սլովենիան (14.3%), Հունգարիան (14.9%) և այլն: Այս հարցում կօգնեն 2019թ. տվյալների առկայությունը, այնուամենայնիվ, անուղղակիորեն հնարավոր կլինի գնահատել նշված թիրախին հասնելու հավանականությունը՝ հաջորդ ենթազույգներում սոցիալական և աղքատության հաղթահարման ծրագրերը ուսումնասիրելու միջոցով:

Ինչ վերաբերում է ծայրահեղ աղքատությանը, կարծում ենք՝ այստեղ թիրախը ընտրված է շատ ավելի համեստ, քանի որ այն արդեն իսկ 2018թ. հասել է 1.0%-ի: Մի այլ հարց է, որ ծայրահեղ աղքատության գիծը Հայաստանում 2018թ. դրությամբ գնահատվել է ընդամենը 24.827 դրամ, և այն տարեցտարի բարձրանում է մի քանի հարյուր դրամով: Այս դեպքում, այլ հավասար պայմաններում (կախված, թե ինչ արդյունքներով

³⁴ ՀՀ կառավարության ծրագիր. ՀՀ կառավարության 2019 թվականի փետրվարի 8-ի թիվ 65-Ա որոշում:
³⁵ «Իմ քայլը» դաշինքի նախընտրական ծրագիր. Բաժին 6. Մրցունակ, մասնակցային և ներառական տնտեսություն, Մաս 14 «Սոցիալական պաշտպանության կայուն համակարգ»:
³⁶ <https://databank.worldbank.org/source/world-development-indicators#>

կհաղթահարվի համավարակը, և ինչքան դա կտևի) ծայրահեղ աղքատությունը հաղթահարելը մեծ դժվարություն չի կազմի:

2.2.2. Սոցիալական ծառայություններ և ժողովրդագրություն

- ...Ըստ այդմ՝ առաջիկա 20 տարիներին **ՀՀ բնակչության թիվը պետք է կրկնապատկվի**:³⁷

Համաձայն ՀՀ ՎԿ տվյալների՝ վերջին տարիներին դիտարկվում է ՀՀ մշտական բնակչության նվազում: 2019 և 2020թթ. նվազման տեմպերը չնչին դանդաղել են և 2020թ. հունվարի 1-ի դրությամբ ՀՀ մշտական բնակչությունը կազմել է 2,959.7 հազ. մարդ: Հարկ է նշել, որ համաձայն ՄԱԿ-ի վերջին կանխատեսումների³⁸ Հայաստանում 2040թ. կանխատեսվում է բնակչության նվազում մինչև 2,905 հազ. մարդ, այսինքն՝ ներկա միտումների շարունակության դեպքում, ՀՀ բնակչությունը 20 տարվա ընթացքում ոչ թե կկրկնապատկվի, այլ կնվազի:

- *Ինտեգրված սոցիալական ծառայությունների համակարգի ներդրումը կբարձրացնի սոցիալական պաշտպանության համակարգի կառավարման արդյունավետությունը, ինչպես նաև սոցիալական ծառայությունների որակը...: Խրախուսելով մասնավոր կազմակերպությունների մուտքը սոցիալական ծառայությունների մատուցման ոլորտ՝ կձևավորվի մրցակցային միջավայր, կներդրվեն ֆինանսավորման այլընտրանքային մոդելներ, կխթանվի սոցիալական ծառայությունների բազմազանությունը*³⁹:
- «Աղքատության որոգայթից» խուսափելու համար իրականացնելու ենք աղքատության պարճառների համապարփակ ուսումնասիրություն եւ ըստ այդմ մշակելու ենք համալիր գործողություններ: **Բարեփոխելու ենք աղքատության նպաստների տրամադրման կարգը**:⁴⁰
- Միջոցներ կձեռնարկվեն **սոցիալական ծառայությունների հասանելիությունն ու մատչելիությունն** ապահովելու ուղղությամբ՝ ընդլայնելով առցանց եղանակով մատուցվող ծառայությունների շրջանակը: Կկատարելագործվեն ծառայությունների մատուցման ընթացակարգերը, և կընդլայնվի այլ տեղեկատվական համակարգերից ինքնաշխատ եղանակով ստացվող և կիրառվող տեղեկատվության (տվյալների) շրջանակը⁴¹:

Ինտեգրված սոցիալական ծառայությունների համակարգի ներդրումը ՀՀ-ում սկսվել է դեռևս 2012թ.: Այդ համատեքստում հիմնական առաջնահերթությունը ՀՀ համար

³⁷ «Իմ քայլը» դաշինքի նախընտրական ծրագիր. Գաղափարական թեզեր
³⁸ <https://population.un.org/wpp/Download/Probabilistic/Population/>
³⁹ ՀՀ կառավարության ծրագիր. ՀՀ կառավարության 2019 թվականի փետրվարի 8-ի թիվ 65-Ա որոշում:
⁴⁰ «Իմ քայլը» դաշինքի նախընտրական ծրագիր. Բաժին 6. Մրցունակ, մասնակցային և ներառական տնտեսություն, Մաս 14 «Սոցիալական պաշտպանության կայուն համակարգ», կետ 4:
⁴¹ ՀՀ կառավարության ծրագիր. ՀՀ կառավարության 2019 թվականի փետրվարի 8-ի թիվ 65-Ա որոշում:

սահմանվել էր քաղաքացիների սպասարկման «մեկ պատուհանի» սկզբունքից անցումը ծառայությունների **առցանց** մատուցմանը: Այս առումով վերջին տարիներին լուրջ բարեփոխումներ, մեր տեղեկություններով, հիմնականում չեն իրականացվել: Այս ուղղությամբ որոշակի քայլ կարելի է համարել online.ssa.am կայքի գործարկումը, որի միջոցով քաղաքացիները կարող են տեղեկանալ՝ արդյո՞ք հանդիսանում են ՀՀ կառավարության կողմից կորոնավիրուսի տնտեսական հետևանքների չեզոքացմանն ուղղված սոցիալական ծրագրերի շահառու, թե՞ ոչ:

Աղքատության նպաստների տրամադրման կարգի և ընդհանրապես համակարգի բարեփոխումների համար ՀՀ ԱՍՀՆ նախաձեռնել է անապահովության գնահատման և սոցիալական աջակցության նոր հայեցակարգի մշակումը, որի աշխատանքները դեռ ընթացքում են⁴²: Հարկ է նշել, որ այս ոլորտի բարեփոխումների նախաձեռնությունը դեռևս նախորդ Կառավարության ժամանակ է սկիզբ առել:

Այնուամենայնիվ, դեռևս խնդիրներ են առկա ընտանեկան նպաստի տրամադրման հասցեականության մասով: Ըստ «Հայաստանի սոցիալական պատկերը և աղքատությունը» 2019 թվականի զեկույցի՝ 2018-ին ընտանեկան նպաստ ստացել է աղքատ տնային տնտեսությունների 34.7%-ը, ծայրահեղ աղքատների՝ 55.6%-ը և ոչ աղքատների՝ 22.7%-ը, այսինքն՝ նպաստ ստանում են նաև ոչ աղքատ ընտանիքները⁴³: ՀՀ ԱՍՀՆ կողմից նախաձեռնվել են նաև հաշմանդամության գնահատման համակարգի բարեփոխումները: Մշակվել է Հաշմանդամության գնահատման համակարգի բարեփոխումների և անձի ֆունկցիոնալության գնահատման համակարգի ներդրման ծրագիրը:

Միաժամանակ, ընդլայնվել է աղքատության նպաստ ստացողների ցանկը ևս 1000 ընտանիքով⁴⁴: 2020թ. հուլիսի 1-ից բարձրացվել են նաև երեխաների ծննդօգնության գումարներն ու մինչև 2 տարեկան երեխաներին տրվող խնամքի նպաստը⁴⁵:

Ինչ վերաբերում է սոցիալական ծառայությունների մատուցման ոլորտ մասնավոր կազմակերպությունների մուտքին և ֆինանսավորման այլընտրանքային մոդելների ներդրմանը, ապա բաց և հասանելի աղբյուրներում այս ուղղությամբ կատարված աշխատանքների կամ միջոցառումների մասին տեղեկատվություն առկա չէ: **Ամփոփելով փաստենք, որ ինչպես ժողովրդագրության, այնպես էլ սոցիալական ծառայությունների հասանելիության բարձրացման, նպաստների տրամադրման համակարգի բարեփոխման, առավել ևս՝ առցանց դարձնելու և ֆինանսավորման**

⁴² <https://www.azatutyun.am/a/30380801.html>

⁴³

<https://www.panorama.am/am/news/2020/04/15/%D5%84%D4%BB%D5%8A%D4%BE%D5%A1%D5%B5%D6%80%D5%A1%D5%B0%D5%A5%D5%B2-%D5%A1%D5%B2%D6%84%D5%A1%D5%BF%D5%B6%D5%A5%D6%80/2274118>

⁴⁴ ՀՀ կառավարության 2020 թվականի հունվարի 23-ի N 45-Ն որոշում:

⁴⁵ ՀՀ կառավարության 2020 թվականի հունվարի 9-ի 3-Ն որոշում:

նոր մոդելներ ներդնելու տեսակետից, լուրջ դրական զարգացումներ չեն արձանագրվել: Առկա են քննարկման կամ նախագծային փուլում որոշ նախաձեռնություններ, և բարձրացվել ու ընդլայնվել են որոշ սոցիալական աջակցության գործիքներ:

2.2.3 Հբաղվածության կարգավորման պետական ծրագրերը

Անդրադառնալով զբաղվածության, այդ թվում՝ աշխատաշուկայում սոցիալական տարբեր խավերի մասնակցությունը բարձրացնելու ծրագրերին, նշենք, որ Կառավարության ծրագրերում այս հարցի առնչությամբ բավական նպատակային շեշտադրումներ են կատարվել:

➤ «Սոցիալական արդարությունը վերականգնելու, հասարակության բոլոր խմբերին վերահնարելու եւ համերաշխ ու հոգաբար հանրություն կերպելու ճանապարհին ապահովելու ենք մարդկանց համար հավասար հնարավորություններ... զբաղվածության արդյունավետ քաղաքականության մշակման ...միջոցով⁴⁶:

1. **Ոլորտում մեզ համար գերակա է լինելու ակտիվ աշխատաշուկայի քաղաքականության վարումը, մասնավորապես՝ աշխատաշուկայի առաջարկի եւ պահանջարկի համապատասխանեցումը փաստերի վերլուծության հիման վրա մշակված ծրագրերի միջոցով, գործազուրկների հմտությունների եւ կարողությունների զարգացումը... Հբաղվածության՝ մեր կողմից մշակված ծրագրերը միտված են լինելու ոչ թե ժամանակավոր ու ցածր որակավորում պահանջող աշխատանքով ապահովելուն, այլ մշտական ու կայուն աշխատանք գտնելուն ու աշխատաշուկայում վերահնարելուն...⁴⁷**

...Ոլորտի քաղաքականության թիրախում են լինելու հատկապես գործազուրկ երիտասարդները, կանայք եւ աշխատաշուկայի կառուցվածքային փոփոխության պատճառով գործազուրկ մնացած ոչ բարձր որակավորում ունեցող աշխատուժը: Մինչեւ 2023 թվականը միջազգային լավագույն փորձի կիրառմամբ եւ փաստերի վերլուծության հիման վրա մշակելու ենք փաթեթային ծրագրեր...⁴⁸:

➤ **Բաժին 4. ԱԶԱՏ, ԱՐԺԱՆԱՊԱՏԻՎ ԵՎ ԵՐՋԱՆԻԿ ՔԱՂԱՔԱՑԻՆ, Մաս 4.7 ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅՈՒՆԸ.** «Կառավարության ծրագրային նպատակն է բարձրացնել երիտասարդների հասարակական, քաղաքական, քաղաքացիական, սոցիալ-տնտեսական և մշակութային մասնակցության մակարդակը, ինչպես նաև մշակել երիտասարդության զբաղվածության և սոցիալ-տնտեսական հիմնախնդիրների լուծման համար անհրաժեշտ մեխանիզմներ:»⁴⁹

⁴⁶ «Իմ քայլը» դաշինքի նախընտրական ծրագիր. Բաժին 6. Մրցունակ, մասնակցային և ներառական տնտեսություն, Մաս 14՝ «Սոցիալական պաշտպանության կայուն համակարգ»:

⁴⁷ «Իմ քայլը» դաշինքի նախընտրական ծրագիր. Բաժին 6. Մրցունակ, մասնակցային և ներառական տնտեսություն, Մաս 14՝ «Սոցիալական պաշտպանության կայուն համակարգ», կետ 1:

⁴⁸ «Իմ քայլը» դաշինքի նախընտրական ծրագիր:

⁴⁹ ՀՀ կառավարության ծրագիր. ՀՀ կառավարության 2019 թվականի փետրվարի 8-ի թիվ 65-Ա որոշում:

- **ԳԼՈՒԽ 23. ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԱՌՈՂՋՈՒԹՅՈՒՆԸ.**
 Կբարձրացվի զբաղվածության կարգավորման պետական ծրագրերի հասցեականությունը, **կներդրվեն նոր ծրագրեր՝** նպատակաուղղված աշխատաշուկայում երիտասարդների, հաշմանդամություն ունեցող անձանց, կանանց մրցունակության բարձրացմանը, «կրթություն-աշխատաշուկա» փոխառնչությունների խթանմանը, առկա թափուր աշխատատեղերի համալրմանը, արդյունքում՝ գործազրկության մակարդակի նվազմանը⁵⁰:

Սակայն, վերջին տարիների զբաղվածության կարգավորման պետական ծրագրերի և դրանց կատարողականի ուսումնասիրությունը ցույց տվեց, որ զարգացումները չեն ընթացել վերոհիշյալ շեշտադրումներին համապատասխան:

2017, 2018, 2019 և 2020թթ. զբաղվածության կարգավորման պետական ծրագրերի⁵¹ վերլուծությունը ցույց տվեց, որ դրանք գործնականում իրարից չեն տարբերվում ոչ ձևով, ոչ էլ բովանդակությամբ: Այսպես, վերջին տարիներին զբաղվածության ծրագրում ներառվել է տարբեր դասավորությամբ ծրագրերի և ծառայությունների հիմնականում նույն շրջանակը (յուրաքանչյուր տարի՝ միջին հաշվով 12-13 ծրագրեր և ծառայություններ), որի մեկ-երկու բաղադրիչ տարեցտարի կամ ռոտացիայի կարգով փոփոխվել են կամ ուղղակի հանվել: Այդ շրջանակը հետևյալն է՝

- 1) Գործազուրկների, աշխատանքից ազատման ռիսկ ունեցող, ինչպես նաև ազատազրկման ձևով պատիժը կրելու ավարտին մինչև վեց ամիս մնացած աշխատանք փնտրող անձանց մասնագիտական ուսուցման կազմակերպում.
- 2) Աշխատաշուկայում անմրցունակ անձանց աշխատանքի տեղավորման դեպքում գործատուին աշխատավարձի մասնակի փոխհատուցման և հաշմանդամություն ունեցող անձին ուղեկցողի համար դրամական օգնության տրամադրում.
- 3) Ձեռք բերած մասնագիտությամբ մասնագիտական աշխատանքային փորձ ձեռք բերելու համար գործազուրկներին աջակցության տրամադրում.
- 4) Աշխատանքի տոնավաճառի կազմակերպում.
- 5) Գործազուրկին այլ վայրում աշխատանքի տեղավորման աջակցության տրամադրում.
- 6) Աշխատաշուկայում անմրցունակ անձանց աշխատանքի տեղավորման դեպքում գործատուին միանվագ փոխհատուցման տրամադրում.
- 7) Աշխատաշուկայում անմրցունակ անձանց հարմար աշխատանքի տեղավորման նպատակով գործատուներին այցելության համար դրամական օգնության տրամադրում.
- 8) Աշխատաշուկայում անմրցունակ անձանց փոքր ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելու համար աջակցության տրամադրում.

⁵⁰ ՀՀ կառավարության ծրագիր. ՀՀ կառավարության 2019 թվականի փետրվարի 8-ի թիվ 65-Ա որոշում

⁵¹ <http://employment.am/am/122/free.html>

- 9) Սեզոնային զբաղվածության խթանման միջոցով գյուղացիական տնտեսությանն աջակցության տրամադրում.
- 10) Աշխատաշուկայում անմրցունակ և մասնագիտություն չունեցող երիտասարդ մայրերի համար գործատուի մոտ մասնագիտական ուսուցման կազմակերպում.
- 11) Մինչև երեք տարեկան երեխայի խնամքի արձակուրդում գտնվող՝ աշխատանք փնտրող անձանց՝ մինչև երեխայի երկու տարին լրանալը աշխատանքի վերադառնալու դեպքում, երեխայի խնամքն աշխատանքին զուգահեռ կազմակերպելու համար աջակցության տրամադրում.
- 12) Վարձատրվող հասարակական աշխատանքների կազմակերպման միջոցով գործազուրկների ժամանակավոր զբաղվածության ապահովում.
- 13) Աշխատաշուկայում անմրցունակ անձանց անասնապահությամբ (տավարաբուծությամբ, ոչխարաբուծությամբ, խոզաբուծությամբ, թռչնաբուծությամբ) զբաղվելու համար աջակցության տրամադրում.
- 14) Մասնագիտական կողմնորոշման, համակարգի մեթոդաբանության ապահովման և կադրերի վերապատրաստման ծառայություններ.
- 15) Աշխատաշուկայի հետազոտման աշխատանքների կազմակերպում:

Օրինակ՝ 2020-ին, 2018թ.-ի համեմատ, առկա է ընդամենը երկու ծրագրի տարբերություն: 2018թ. «Աշխատաշուկայում անմրցունակ անձանց գործատուներին այցելության համար դրամական օգնության տրամադրում» և «Մասնագիտական կողմնորոշման, համակարգի մեթոդաբանության ապահովման և կադրերի վերապատրաստման ծառայություններ» ծրագրերի փոխարեն ներառվել են «Վարձատրվող հասարակական աշխատանքների կազմակերպման միջոցով գործազուրկների ժամանակավոր զբաղվածության ապահովում» և «Աշխատաշուկայում անմրցունակ անձանց անասնապահությամբ (տավարաբուծությամբ, ոչխարաբուծությամբ, խոզաբուծությամբ, թռչնաբուծությամբ) զբաղվելու համար աջակցության տրամադրում» ծրագրերը: Սակայն վերջիններս նոր ծրագրեր չեն, քանի որ առկա են եղել դեռևս 2017 թվականին:

Հաշվի առնելով, որ զբաղվածության խթանման գործիքակազմը, այնուամենայնիվ, նույնն է, և գործողությունները պետք շարունակական բնույթ կրեն, վերլուծեցինք նաև ծրագրերի կատարողականները ⁵² առ այն, որ հնարավոր է 2018թ. իշխանափոխությունից հետո հետո բարձրացել է վերջինիս արդյունավետությունը:

Ուսումնասիրությունը ցույց տվեց, որ ընդհանուր առմամբ կատարողական ցուցանիշները նույնպես էականորեն չեն բարելավվել, որոշ ծրագրերով առկա է բարելավում, մյուսներով՝ ոչ:

⁵² <http://employment.am/am/36/free.html>

Ամփոփելով այս հատվածը՝ կարելի է փաստել, որ որոշակի բարելավումներ առկա են ծրագրերի կատարողականի մասով, սակայն Կառավարության կողմից խոստացված նոր և ավելի արդյունավետ ծրագրերը դեռևս չեն մշակվել, չեն ներդրվել և իրականացվել: Իրականացված ծրագրերը հիմնականում նախկին ծրագրերի տրամաբանական շարունակությունն են և՛ մատուցման ձևով, և՛ բովանդակությամբ: Խոստումները դեռևս ամբողջությամբ չեն կատարվել:

2.2.4. Կենսաթոշակներնրը և նվազագույն աշխատավարձը

Հաշվի առնելով, որ կենսաթոշակային համակարգը և դրա բարեփոխումները առանձին վերլուծության թեմա է, այս ենթագլխում կուսումնասիրվեն միայն կենսաթոշակների և նվազագույն ամսական աշխատավարձի բարձրացման վերաբերյալ ՀՀ կառավարության հետևյալ խոստումները.

- Պարբերաբար բարձրացվելու են պետական կենսաթոշակների չափերը՝ ապահովելով միջին կենսաթոշակի չափի առաջանցիկ աճ՝ գնաճի նկատմամբ⁵³:
- 5. Պետական համակարգում հնարավոր խնայողությունների ու եկամուտների նոր աղբյուրների շնորհիվ նախատեսվում ենք մինչև 2023 թվականը կենսաթոշակների բարձրացում⁵⁴:
- 4.2. ԱՂՔԱՏՈՒԹՅԱՆ ՀԱՂԹԱՀԱՐՈՒՄԸ, ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԺՈՂՈՎՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ. ...հաշվի առնելով երկրի մակրոտնտեսական ցուցանիշները, կիրականացվի նվազագույն ամսական աշխատավարձի շարունակական բարձրացում⁵⁵:

ՀՀ կառավարության 2019թ. դեկտեմբերի 26-ի թիվ 1920-Ն որոշմամբ բարձրացվել են կենսաթոշակների չափերը: Նոր կարգավորմամբ 2020 թվականի հունվարի 1-ից սահմանվել է.

- նվազագույն կենսաթոշակի չափը՝ 26 500 դրամ (25 500 դրամի փոխարեն),
- աշխատանքային և զինվորական կենսաթոշակի չափը հաշվարկելու համար հիմնական կենսաթոշակի չափերը՝ 18 000 դրամ (16 000 դրամի փոխարեն),
- աշխատանքային ստաժի մեկ տարվա արժեքը՝ առաջին տասը տարվա համար՝ 950 դրամ (800 դրամի փոխարեն) և այլն (առավել մանրամասն տե՛ս <http://www.mlsa.am/?p=24741>):

Հարկ է նշել, որ այս փոփոխություններով, կենսաթոշակները կավելանան միջին հաշվով ընդամենը 10%-ով:

⁵³ ՀՀ կառավարության ծրագիր. ՀՀ կառավարության 2019 թվականի փետրվարի 8-ի թիվ 65-Ա որոշում:
⁵⁴ «Իմ քայլը» դաշինքի նախընտրական ծրագիր:
⁵⁵ ՀՀ կառավարության ծրագիր. ՀՀ կառավարության 2019 թվականի փետրվարի 8-ի թիվ 65-Ա որոշում:

Կենսաթոշակների ոլորտում առկա են նաև այլ խնդիրներ, օրինակ՝ կենսաթոշակի անցնող անձանց աշխատանքային կեղծ ստաժի հավելագրման մասով: Այս հարցը հնարավոր է լուծել թվայնացնելով բոլոր աշխատանքային գրքույկները և ապահովել անհրաժեշտ տեղեկատվական հիմք՝ աշխատանքային կեղծ ստաժի հիման վրա կենսաթոշակի նշանակումները բացառելու համար⁵⁶: Այդ աշխատանքները մեկնարկել են դեռևս 2016 թվականի օգոստոսից և պետք է ավարտվեն 2018 թվականի դեկտեմբերի 31-ին: Սակայն մեկ տարով հետաձգվել է այդ ժամկետը՝ իշխանափոխությունից հետո, որի ընթացքում այն կրկին չի իրականացվել և հետաձգվել է ևս երկու տարով⁵⁷:

Ինչ վերաբերում է նվազագույն ամսական աշխատավարձին, ապա այն 2019 թվականի նոյեմբերի 19-ի թիվ ՀՕ-223 «Նվազագույն ամսական աշխատավարձի մասին» օրենքում փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ 55.000 դրամից բարձրացվել է 68.000 դրամ: Փոփոխության համաձայն՝ աշխատաժամանակի նորմալ տևողության դեպքում գործավարձով և ժամավճարով վարձատրվող աշխատողների ժամային տարիֆային դրույքի նվազագույն չափը ևս կփոփոխվի՝ 330 դրամից դառնալով 406 դրամ: Այս փոփոխությունը գործում է 2020թ. հունվարի 1-ից:

Հարկ է նշել, որ նվազագույն աշխատավարձի բարձրացումն առնչվում է **մինչև 68.000 դրամ ամսական զուտ աշխատավարձ ստացող և մինչև 406 դրամ ժամային տարիֆային դրույքով վարձատրվող աշխատողներին**⁵⁸:

Վերոհիշյալից պարզ է, որ այս փոփոխությունները հեղափոխական ազդեցություն չեն ունենա ՀՀ քաղաքացիների կենսամակարդակի վրա, սակայն ֆորմալ առումով խոստումը որոշ չափով կատարվում է:

Ամփոփելով արձանագրենք, որ ֆորմալ առումով Կառավարությունը դեռևս կատարում է իր խոստումը՝ կենսաթոշակները և նվազագույն ամսական աշխատավարձը բարձրացել են: Մյուս կողմից, կարևոր է դրանց շարունակականությունը և բարձրացման չափերը: Կարծում ենք միջին հաշվով 10% բարձրացումը չի համապատասխանում ՀՀ կառավարության որդեգրած քաղաքականությանը:

⁵⁶ <https://www.tert.am/am/news/2020/07/07/tadevos/3338352>

⁵⁷ <http://www.mlsa.am/?p=25908>

⁵⁸ <http://www.mlsa.am/?p=24151>

ՄԱՍ 3. COVID-19-Ի ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԻ ՉԵՂՈՔԱՑՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ԵՎ ԴՐԱՆՑ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՌՈՏ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ

COVID-19 համավարակի տարածման կանխարգելման նպատակով արտակարգ դրություն հայտարարելուց ի վեր ՀՀ կառավարությունը ձեռնամուխ եղավ կորոնավիրուսի տնտեսական և սոցիալական հետևանքները չեզոքացնող ծրագրերի մշակմանը և իրականացմանը: Այս մասում, համաձայն մեր վերլուծության նպատակի, կանդրադառնանք միայն սոցիալական ուղղվածության միջոցառումների համառոտ ուսումնասիրությանը, քանի որ կարծում ենք՝ ավելի խորքային և մանրամասն գնահատականը առանձին վերլուծության առարկա է:

Մինչ այսօր ՀՀ կառավարության կողմից հաստատվել է կորոնավիրուսի հետևանքները չեզոքացնող թվով 13 սոցիալական միջոցառում ⁵⁹ : Սույն ուսումնասիրության շրջանակում նպատակահարմար ենք գտել ուսումնասիրել նաև տնտեսական ծրագրերից թվով 3-ը ⁶⁰ , որոնք միտված են առանձին տնտեսավարողների մոտ առաջացած դժվարությունների հետևանքով արդյունավետ աշխատատեղերի պահպանությանը:

Այսպիսով, սոցիալական միջոցառումները կարելի է բաժանել մի քանի խմբերի.

- 1) Անչափահաս երեխաներ ունեցող ծնող/ծնողներ, որը/որոնք կորցրել են աշխատանքը պայմանավորված համավարակի հետ (միջոցառում՝ 4, 9):
- 2) Բնական գազի և էլեկտրաէներգիայի մատակարարման վարձերի մասնակի փոխհատուցում քաղաքացիներին (միջոցառում՝ 11, 12, 16):
- 3) Որոշակի ոլորտների վարձու աշխատողներին միանվագ աջակցություն, որոնք կորցրել են աշխատանքը համավարակի պատճառով (միջոցառում՝ 8, 20):
- 4) Միանվագ աջակցություն համավարակի պատճառով աշխատանքը կորցրած վարձու աշխատողներին (միջոցառում՝ 6, 22):
- 5) Սոցիալական որոշ խմբերի՝ չաշխատող հղի կանանց, սոցիալապես անապահով ընտանիքներին և սովորողներին աջակցություն, համապատասխան՝ միանվագ աջակցության և ուսման վարձի փոխհատուցման տեսքով (միջոցառում՝ 7, 13, 14):
- 6) Որոշակի ոլորտում հասարակական աշխատանքների կազմակերպում (միջոցառում՝ 15):

Մանրամասն անդրադառնանք, վերոհիշյալ խմբերի միջոցառումներին և փորձենք գնահատել դրանց արդյունավետությունը:

⁵⁹ <https://www.gov.am/am/covid-19-cragrer/>

⁶⁰ <https://www.gov.am/am/covid19/>

1) Անչափահաս երեխաների մասով աջակցության երկու միջոցառում է իրականացվել: Առաջինը վերաբերում է մինչև 14 տարեկան անչափահաս երեխա ունեցող ընտանիքին, որտեղ ծնողներից մեկը (կամ երկուսը) կորցրել է աշխատանքը մարտի 13-25-ն ընկած ժամանակահատվածում (միանվագ 100 000 դրամ): Այս միջոցառման աջակցության չափը կարծում ենք՝ ընդունելի է, սակայն տարակուսելի են ժամկետները, որոնցում պետք է կորցրած լինեին աշխատանքը: Երկրորդ միջոցառումը վերաբերում է արդեն մինչև 18 տարեկան երեխա ունեցող չգրանցված աշխատանք կամ աշխատանք չունեցող ծնողներին: Այս միջոցառման մասով հասկանալի չէ աջակցության չափը՝ 26 500 դրամ, որը կարծում ենք՝ առնվազն պետք է լիներ աղքատության գծի չափով՝ 42 621 դրամ (2018թ. տվյալներով):

2) Բնական գազի և էլեկտրաէներգիայի վարձերի մասնակի փոխհատուցման միջոցառումները կարծում ենք՝ ամենաանարդյունավետն էին սոցիալական ազդեցության տեսանկյունից: Այսպես, երեք միջոցառումները տարբերվում են հիմնականում մատակարարված գազի կամ էլեկտրաէներգիայի սպառման չափերով, այսինքն՝ հետզհետե ընդլայնվում էր շահառուների շրջանակը: Նախ, բոլոր ծրագրերը փետրվար ամսվա համար էին, այն դեպքում, որ ջեռուցման սեզոնը առնվազն մինչև ապրիլ ամիսն է: Սկզբում այն միտված էր անապահով ընտանիքների համար, որոնց 2020 թվականի փետրվար ամսվա ծախսը չի գերազանցել բնական գազի սպառման գծով՝ 10 000 դրամը, էլեկտրական էներգիայի սպառման գծով՝ 5 000 դրամը: Սակայն իրականում ստացվեց այնպես, որ այն տարածվեց շատ ավելի լայն շրջանակի վրա, դարձնելով՝ ոչ արդյունավետ: Օրինակ, բազմաթիվ դեպքերում, ապահով ընտանիքը, որը ջեռուցել էր բնակարանը միայն էլեկտրաէներգիայով, և վճարել մոտ 60-70 հազ. դրամ (իսկ տարբեր այլ վարձերը հաշված՝ 100 հազարից ավելի), ստացավ 3-4 հազ. դրամ աջակցություն գազի սպառման մասով, կամ ընտանիքը, որը մի քանի բնակարան ունի, նույնպես մեկ-երկու բնակարանի մասով ստացավ աջակցություն: Այս դեպքում աջակցությունը պետք է կա՛մ ավելի հասցեական լիներ, կա՛մ ավելի էական, ինչը կունենար ավելի մեծ սոցիալական էֆեկտ: Նույնը կարելի է ասել հաջորդ ընդլայնված ծրագրերի մասով:

3) Այս միջոցառումներով որոշակի ոլորտների (հիմնականում այն ծառայությունների ոլորտների, որոնց գործունեությունը սահմանափակված է) վարձու աշխատողներին և անհատ ձեռնարկատերերին միանվագ նվազագույն աշխատավարձի չափով աջակցություն՝ սկզբում միայն մարտի 13-ից 30-ը, իսկ այնուհետև մարտի 1-ից հունիսի 15-ը ոլորտի աշխատող հանդիսացող քաղաքացիներին: Այս մասով, նախ պետք է փաստել, որ աջակցությունը ադեկվատ չէ կորուստների համեմատ: Աշխատողները առնվազն 3-4 ամիս չեն աշխատել, իսկ փոխարենը կարող են ստանալ առավելագույնը երկու նվազագույն աշխատավարձ: Միաժամանակ, հունիսի 15-ից արդեն իսկ մեկ ամսից ավելի է անցել, և արտակարգ դրությունը երկարաձգվել է, իսկ որոշ ոլորտներ այդպես էլ չեն բացվել: Ըստ որոշ

գնահատականների՝ այդ ոլորտների գործազրկության մակարդակը կարող է հասնել մինչև 40%⁶¹:

4) Այս միջոցառումներով աջակցություն է ցուցաբերվում համավարակի պատճառով մարտի 13-ից մինչև հունիսի 1-ը (սկզբում՝ մարտի 13-ից 30-ը, այնուհետև՝ մարտի 31-ից հունիսի 1-ը) աշխատանքը կորցրած անձանց միանվագ նվազագույն աշխատավարձի չափով՝ առանց ոլորտների սահմանափակման: Այս դեպքում խնդիրները նույնն են, ինչ կոնկրետ ոլորտների աշխատողներին տրամադրվող աջակցության դեպքում՝ տրամադրվող աջակցության փոքր չափերը և դեռևս շարունակվող ու երկարաձգվող արտակարգ դրությունը (այս պայմաններում նոր աշխատանք գտնելը շատ ավելի բարդ է):

5) Անապահով ընտանիքների աջակցությունը թերևս ամենակարևորներից է սոցիալական ապահովության տեսանկյունից, սակայն անապահով ընտանիքների աջակցությունը կազմել է ընդամենը միանվագ 18 000 դրամ:

Ինչ վերաբերում է ուսանողների վարձերի փոխհատուցման միջոցառմանը, ապա կարծում ենք՝ այն հիմնավորված է և բավական արդյունավետ:

6) Մեր կարծիքով, հաստատվածներից թերևս համեմատական առումով արդյունավետներից է 15-րդ միջոցառումով հաստատված ծրագիրը, որով կազմակերպվում են հասարակական աշխատանքներ: Այս կարգի միջոցառումները լուծում են կոնկրետ խնդիրներ, ապահովում են աշխատանքով աշխատանքը կորցրած անձանց կամ անապահովներին, և, իհարկե, ճգնաժամային վիճակներում խթանում են համախառն սպառումը: Ցավոք, այս միջոցառումը եզակի էր և համեմատաբար փոքր ծավալներով:

Ինչ վերաբերում է 3 տնտեսական ծրագրերին (միջոցառումներ 5, 18, 21), որոնք առնչություն ունեն աշխատատեղերի պահպանման հետ, ապա այս միջոցառումները միտված են աջակցելու այն կազմակերպություններին (2-50, այնուհետև ընդլայնված՝ 2-100 աշխատող ունեցող), որոնք չեն կրճատում աշխատատեղեր: Սակայն, ուսումնասիրելով միջոցառումները, ի հայտ եկան մի շարք հարցեր: Ինչո՞ւ է աջակցության ժամկետը ապրիլի 30-ից տարածվել մայիս ամսվա վրա, երբ գերակշիռ ոլորտների, հատկապես՝ արդյունաբերության, աշխատանքները թույլատրվել էին: Մյուս կողմից՝ երրորդ ծրագրում (միջոցառում 21) փոխվել է աշխատողների թվի որոշման կարգը, ինչից կարելի է ենթադրել, որ նախկին կարգավորումների հետ խնդիրներ են առաջացել, և պարզ չէ՝ արդյո՞ք այդ խնդիրների բացասական հետևանքները վերականգնվել են: Պատկան մարմնի կողմից հաշվարկվել է արդյոք, որ տնտեսավարողները հենց այդ աջակցության շնորհիվ են պահպանել աշխատատեղերը, թե՞ ամեն դեպքում չէին կրճատելու, իսկ աջակցությունը հավելյալ ստացած գումար է:

⁶¹ <https://news.am/arm/news/590756.html>

Ընդհանուր առմամբ, դժվար է ասել՝ այս աջակցությունը ավելի շուտ պարզև՝ է կազմակերպություններին սոցիալական պատասխանատվություն ցուցաբերելու և աշխատատեղ չկրճատելու համար (խիստ կասկածելի է, որ շահույթը մաքսիմալացնել ձգտող տնտեսավարողը կորդեգրի «բարեգործական» վարքագիծ), թե՛, այնուամենայնիվ, խթան է հանդիսանում չկրճատելու համար: Հարկ է նշել նաև, որ Պետական եկամուտների կոմիտեի⁶² տվյալներով 2020թ. ապրիլին Հայաստանում գրանցված աշխատողներից աշխատավարձ են ստացել 547 185-ը: Նշվածը ոչ թե գրանցված աշխատողների ընդհանուր քանակն է, այլ նրանց, որոնք ապրիլին աշխատավարձ են ստացել և վճարել եկամտային հարկ: Այսինքն՝ գրանցված աշխատողների մի մասը հարկադիր պարապուրդում է եղել ապրիլին և աշխատավարձ չի ստացել: Ըստ ՊԵԿ-ի՝ 2020 թվականի հունվարին գրանցված աշխատողների քանակը, որոնք աշխատավարձ են ստացել և եկամտային հարկ վճարել, կազմել է 604 740, փետրվարին՝ 619 001, մարտին՝ 621 544, ապրիլին՝ 547 185: Այսպիսով, ապրիլին, մարտի համեմատ, գրանցված աշխատավարձ ստացողների թիվը կրճատվել է 74 359-ով:

Աջակցության չափից, ձևից և բովանդակությունից դատելով՝ կարելի է ենթադրել, որ սա ուղղակի պարզև է: Այնուամենայնիվ, ավելի ստույգ գնահատական տալու համար, ինչպես նշել էինք, անհրաժեշտ է առանձին վերլուծություն՝ այդ թվում, կոնկրետ աջակցություն ստացած կազմակերպությունների մասով:

Ամփոփելով COVID-19-ի հետևանքները չեզոքացնող միջոցառումների ուսումնասիրությունը՝ կարելի է փաստել, որ դրանք հիմնականում լավ չհաշվարկված և հապճեպ են եղել՝ հաշվի չառնելով հետագա հնարավոր զարգացումները: Եթե առաջին փուլում դա օբյեկտիվորեն հնարավոր չէր իրականացնել, իրավիճակի բացառիկությամբ և արձագանքելու կարճ ժամկետներով պայմանավորված, ապա հետագայում անհրաժեշտ էր ավելի հասցեական և արդյունավետ միջոցառումներ մշակել: Որոշ միջոցառումներ ընդունվել են հիմնականում հանրային ճնշումների ազդեցության տակ (օրինակ՝ գազի և էլեկտրաէներգիայի փոխհատուցման միջոցառումները) կամ առանց պատշաճ հաշվարկների՝ օգնություն տրամադրելու նպատակով: Սակայն, մեր կարծիքով, առկա են նաև հաջողված ծրագրեր (օրինակ, լավ սովորողների վարձերի փոխհատուցման կամ հասարակական աշխատանքներ իրականացնելու միջոցառումները):

⁶² https://hetq.am/hy/article/117837?fbclid=IwAR2IFlaMkvee11Sv3qfRUaNY6MwslUZIURtL8AdyHhoBVO8GIber3_RUM6o

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Գործազրկության կրճատմանը, զբաղվածության խթանմանն ու աղքատության հաղթահարմանն ուղղված ՀՀ կառավարության քաղաքականության, տրված խոստումների և կատարված աշխատանքների ուսումնասիրության հիման վրա կարելի է հանգել հետևյալ եզրակացություններին.

- 2019 թվականի պատկերով աշխատանքի շուկայում առկա են որոշակի դրական միտումներ: Այսպես, որոշակիորեն աճել է աշխատուժի առաջարկը, նվազել է աշխատուժից դուրս բնակչությունը, այսինքն՝ նոր հնարավորություններ են ստեղծվել նախկինում տնտեսական կյանքին չմասնակցող անձանց համար, բարելավվել են գործազրկության և զբաղվածության մակարդակի ցուցանիշները: Մյուս կողմից՝ լուրջ փոփոխություններ չեն արձանագրվել աշխատանքային ռեսուրսների, աշխատավարձի, պետական հատվածի աշխատողների թվաքանակի և մշտական բնակչության աճի մասով: Այստեղ դեռևս արդյունքները հեռու են բավարար լինելուց:
- 2018-2019 թվականներին ի հաշիվ ի հայտ եկած նոր (հիմնականում՝ սովերից դուրս եկած) աշխատատեղերի՝ զբաղվածությունը ընդլայնվել է: Հարկ է նշել, որ սովերից դուրս եկած աշխատատեղերը թեև կարճաժամկետ հատվածում դրական են ազդում բյուջեի եկամտային մասի վրա, սակայն զբաղվածության խթանման և գործազրկության դեմ պայքարի գործիք չեն հանդիսանում: Վերջին ամիսների համաշխարհային և ներքին տնտեսական զարգացումների ներքո՝ դեռևս հարցականի տակ է մինչև 2023թ. էապես կամ 5 տոկոսային կետով գործազրկությունը կրճատելու Կառավարության խոստումի իրագործելիությունը: Աշխատավարձերի մասով առկա է որոշակի բարձրացում, սակայն դրանք չեն գերազանցում վերջին մի քանի տարիների համետ ցուցանիշները, որոշակի բարելավում կարելի է համարել պետական հատվածի աշխատավարձերի շուրջ 8.4% աճը:
- Աշխատողների իրավունքների պաշտպանության և տեսչական մարմնի բարեփոխման ուղղությամբ որոշակի քայլեր կատարվել են միայն օրենսդրական մասով: Վերջերս փոփոխություններ են կատարվել ԱԱՏՄ կանոնադրությունում, որով որոշակիորեն ընդլայնվել են մարմնի լիազորությունները աշխատանքային իրավունքների և աշխատանքային օրենսդրության, կոլեկտիվ և աշխատանքային պայմանագրերի պահանջների պահպանման վերահսկողության մասով: Ինչ վերաբերում է դրա իրականացմանը պրակտիկայում, ապա դեռ վաղ է գնահատականներ տալ: Մյուս կողմից, ՀՀ ԱՍՀՆ աշխատակազմի Զբաղվածության պետական գործակալությունում, տեսանելի բարեփոխումներ չեն իրականացվել: Այս մասով խոստումները կարելի է համարել դեռևս չկատարված:

- Սոցիալական ծառայությունների հասանելիության բարձրացման, նպաստների տրամադրման համակարգի բարեփոխման, առավել ևս առցանց դարձնելու և ֆինանսավորման նոր մոդելներ ներդնելու տեսակետից լուրջ դրական զարգացումներ չեն արձանագրվել: Առկա են քննարկման կամ նախագծային փուլում որոշ դրական նախաձեռնություններ, ինչպես նաև ընդլայնվել են որոշ սոցիալական աջակցության գործիքներ:
- Կենսաթոշակները և նվազագույն ամսական աշխատավարձը բարձրացել են, ուստի ֆորմալ առումով Կառավարությունը դեռևս կատարում է իր խոստումը: Մյուս կողմից՝ կարևոր է դրանց շարունակականությունը և բարձրացման չափերը: Կարծում ենք կենսաթոշակների միջին հաշվով 10% բարձրացումը չի համապատասխանում ՀՀ կառավարության ծրագրի ոգուն և ամրագրված սկզբունքներին:
- Զբաղվածության կարգավորման պետական ծրագրի տարբեր ենթածրագրերի կատարողականի մասով ունենք որոշակի բարելավումներ, կարիքավոր քաղաքացիների փոքր-ինչ ավելի լայն շրջանակ է կարողացել օգտվել տարբեր ծրագրերից: Սակայն Կառավարության կողմից խոստացված նոր և ավելի արդյունավետ ծրագրերը դեռևս չեն մշակվել և իրականացվել: Իրականացված ծրագրերը հիմնականում նախկին ծրագրերի տրամաբանական շարունակությունն են և՛ մատուցման ձևով, և՛ բովանդակությամբ, ուստի խոստումները դեռևս ամբողջությամբ չեն կատարվել:
- COVID-19-ի հետևանքները չեզոքացնող միջոցառումները եղել են հիմնականում հապճեպ, հետագա հնարավոր զարգացումները լավ չհաշվարկված: Եթե առաջին փուլում առկա էր ժամանակի սղություն և հնարավորինս արագ արձագանքելու անհրաժեշտություն, ապա հետագայում կարելի էր առավել հասցեական և արդյունավետ միջոցառումներ մշակել: Որոշ միջոցառումներ ընդունվել են հիմնականում հանրային ճնշումների ազդեցության տակ (օրինակ՝ գազի և էլեկտրաէներգիայի փոխհատուցման միջոցառումները) կամ առանց պատշաճ հաշվարկների՝ օգնություն տրամադրելու նպատակով: Սակայն, մեր կարծիքով, առկա են նաև հաջողված ծրագրեր (օրինակ՝ լավ սովորողների վարձերի փոխհատուցման կամ հասարակական աշխատանքներ իրականացնելու միջոցառումները):

Ամփոփելով կարելի արձանագրել, որ թեև Կառավարության ծրագրով հաստատված խոստումները հիմնականում վերացական և հոչակագրային բնույթ ունեն, գրեթե առանց կոնկրետ թվային ցուցանիշների, սակայն անգամ այդ դեպքում դրանք հիմնականում չեն կատարվել: Տպավորություն է, որ Կառավարության և նախընտրական ծրագրերը մշակելիս պաշտոնյաները առաջնորդվել են գեղեցիկ մտքեր - անորոշ, չգնահատվող արդյունքներ սկզբունքով: Կառավարությունը չի ձեռնարկել և ոչ մի «հեղափոխական»

մոտեցում կամ միջոցառում՝ այս ոլորտում էական, կտրուկ և տեսանելի փոփոխություն
իրականացնելու համար:

Հավելված 1. Աշխատանքի շուկայի և վարձատրության ցուցանիշները և որոշ ցուցանիշների հաշվարկման մեթոդաբանական առանձնահատկությունները

Աշխատանքային ռեսուրսները⁶³ 15-75 տարեկան աշխատուժի (գրադված և գործազուրկ) և աշխատուժից դուրս (աշխատանք չունեցող և աշխատանք չփնտրող) բնակչության հանրագումարն են:

Աշխատուժից դուրս բնակչության մեջ ներառվում են անձինք, ովքեր հետազոտվող ժամանակաշրջանում **չեն աշխատել և աշխատանք չեն փնտրել**՝ չեն եղել գրադված կամ գործազուրկ, մասնավորապես՝

- առկա ուսուցմամբ և արտադրությունից կտրված սովորողները և ուսանողները.
- տնային տնտեսությամբ գրադվածները.
- երեխաներին, հիվանդ հարազատներին խնամողները.
- անձինք, ովքեր զանազան պատճառներով չեն աշխատում և աշխատանք չեն փնտրում (կենսաթոշակառուներ (տարիքային, արտոնյալ պայմաններով, հաշմանդամության), սեփականության օգտագործումից եկամուտ ստացողներ, պարտադիր ժամկետային զինծառայողներ և այլն):

Աշխատուժի մեջ ներառվում են գրադվածները և գործազուրկները, ովքեր դիտարկվող ժամանակահատվածում աշխատանքի շուկայում ապահովվում են աշխատուժի առաջարկը՝ ապրանքների և ծառայությունների արտադրության համար:

Աշխատուժի մասնակցության մակարդակը հաշվարկվում է աշխատուժի թվաքանակի տոկոսային հարաբերությամբ 15-75 տարեկան բնակչության (աշխատանքային ռեսուրսների) թվաքանակին:

Աշխատանքային գործունեությունը (աշխատանքը) անձի կողմից իրականացվող ցանկացած գործունեությունն է, որի նպատակն է արտադրել ապրանքներ կամ տրամադրել ծառայություններ՝ սեփական կամ այլոց սպառման համար՝ անկախ աշխատանքի ֆորմալ, ոչ ֆորմալ բնույթից կամ գործունեության օրինականությունից:

Աշխատանքի հինգ ձևերն են.

1. Զբաղվածություն՝ այլոց համար կատարվող եկամուտ հետապնդող աշխատանք.
2. **Սեփական սպառման համար** ապրանքների արտադրություն և ծառայությունների տրամադրում.
3. Զվարճատրվող աշխատանքային պրակտիկա՝ այլոց համար կատարվող չվճարվող աշխատանք՝ աշխատանքային փորձ կամ հմտություն ձեռք բերելու նպատակով.

⁶³ Այս և մյուս սահմանումները տե՛ս https://www.armstat.am/file/article/sv_12_19a_6300.pdf

4. Կամավոր աշխատանք՝ այլոց համար կատարվող ոչ հարկադիր աշխատանք.
5. Այլ աշխատանք՝ այլոց համար կատարվող (օրինակ՝ աշխատանք կալանավայրում), որի գնահատման մեթոդաբանությունը դեռևս մշակման գործընթացում է:

Զբաղված են համարվում անձինք, ովքեր դիտարկվող ժամանակահատվածում **եկամուտ (աշխատավարձ) ստանալու նպատակով գոնե մեկ ժամ** զբաղվել են ապրանքների արտադրությամբ կամ տրամադրել են ծառայություններ՝ **բացառապես այլոց սպառման համար**: Զբաղվածների թվաքանակում ներառվում են նրանք, ովքեր՝

- ունեցել են վարձու կամ ոչ վարձու աշխատանք, անկախ այն հանգամանքից՝ աշխատանքը եղել է մշտական, ժամանակավոր կամ սեզոնային, միանգամյա կամ պատահական,
- ժամանակավորապես տարբեր պատճառներով բացակայել են աշխատանքից՝ հիվանդության, հիվանդի խնամքի, ամենամյա արձակուրդի կամ հանգստյան օրերի, աշխատավայրից դուրս ուսուցման, գործատուի նախաձեռնությամբ հարկադիր արձակուրդում (չվճարվող կամ մասնակիորեն վճարվող) գտնվելու, գործադուլի և այլ պատճառներով.
- առանց վարձատրության աշխատել են տնային տնտեսությանը կամ ազգականին (բարեկամին) պատկանող շուկայական ուղղվածությամբ ընտանեկան կազմակերպությունում՝ օգնելու, օժանդակելու նպատակով:

Ըստ իրենց կարգավիճակի զբաղվածները դասակարգվում են վարձու⁶⁴ և ոչ վարձու⁶⁵ աշխատողների:

Զբաղվածության մակարդակը հաշվարկվում է զբաղվածների թվաքանակի տոկոսային հարաբերությամբ համապատասխան տարիքային խմբի առկա բնակչության (աշխատանքային ռեսուրսների) թվաքանակին:

Ֆորմալ և ոչ ֆորմալ զբաղվածության վերլուծությունը խարսխված է աշխատատեղերի քանակի (ինչպես հիմնական, այնպես էլ լրացուցիչ (երկրորդ) և ոչ թե զբաղված անձանց թվաքանակի վրա: Հետևաբար, ընդամենը զբաղվածությունն ըստ աշխատանքի բնույթի (ֆորմալ, ոչ ֆորմալ) կունենա ավելի մեծ քանակական արտահայտություն, քան զբաղվածների թվաքանակը:

⁶⁴ **Վարձու աշխատող են** համարվում անձինք, ովքեր աշխատում են գործատուի հետ կնքած պայմանագրի, աշխատանքի ընդունվելու հրամանի կամ ձեռք բերված որոշակի գրավոր կամ բանավոր համաձայնության հիման վրա և ստանում են դրամական և (կամ) բնաիրային փոխհատուցում՝աշխատավարձ:

⁶⁵ **Ոչ վարձու** աշխատող են համարվում անձինք, ովքեր ինքնուրույնաբար են իրենց ապահովում եկամտաբեր տնտեսական գործունեությամբ (գործատու, ինքնազբաղված, ընտանիքի առանց վարձատրության աշխատող անդամ, արտադրական, սպառողական կոոպերատիվի անդամ):

Ոչ ֆորմալ զբաղվածությունը դիտարկվող ժամանակահատվածում ոչ ֆորմալ աշխատատեղերի հանրագումարն է՝ անկախ այն հանգամանքից եղել են դրանք ֆորմալ, թե ոչ ֆորմալ հատվածի կազմակերպություններում կամ տնային տնտեսություններում:

Ոչ ֆորմալ զբաղվածության մեջ ներառվում են.

ա) գործատուի հետ բանավոր համաձայնությամբ վարձու աշխատողները (այդ թվում՝ տնային տնտեսությունում վճարովի աշխատողները),

բ) չգրանցված կազմակերպությունների սեփականատեր գործատուները և ինքնազբաղվածները,

գ) առանց վարձատրության աշխատող ընտանիքի անդամները,

դ) չգրանցված արտադրական կոոպերատիվների անդամները և

ե) բացառապես սեփական վերջնական սպառման համար ապրանք արտադրողները (եթե համարվում են զբաղված):

Ոչ ֆորմալ զբաղվածներ են համարվել նաև տնային տնտեսություններում բացառապես սեփական վերջնական սպառման համար ապրանք և (կամ) ծառայություն արտադրող ինքնազբաղվածները, առանց վարձատրության աշխատող ընտանիքի անդամները, եթե իրենց արտադրված արտադրանքը նշանակալի մասնաբաժին է ունեցել տնային տնտեսության ընդհանուր սպառման մեջ:

Ոչ ֆորմալ զբաղվածության մակարդակը ոչ ֆորմալ զբաղվածություն ունեցողների թվաքանակի (ոչ ֆորմալ աշխատատեղերի) տեսակարար կշիռն է ընդամենը զբաղվածության (ընդամենը աշխատատեղերի) մեջ կամ ոչ ֆորմալ աշխատատեղերի և ընդամենը աշխատատեղերի տոկոսային հարաբերությունն է:

Գործազուրկներ՝

- **Աշխատանքի միջազգային կազմակերպության կողմից առաջարկվող ստանդարտ սահմանման համաձայն՝ գործազուրկ են** համարվում անձինք, ովքեր հետազոտվող ժամանակաշրջանում միաժամանակ բավարարել են հետևյալ երեք պայմաններին՝
 - չեն ունեցել աշխատանք կամ եկամտաբեր զբաղմունք.
 - ակտիվորեն փնտրել են աշխատանք՝ օգտագործելով ցանկացած միջոց, այսինքն՝ դիմել են զբաղվածության պետական և (կամ) մասնավոր գործակալություն, աշխատանք են փնտրել ծանոթների, բարեկամների, հայտարարությունների միջոցով կամ ցանկացած այլ եղանակով՝ հետազոտությանը նախորդող վերջին 4 շաբաթվա ընթացքում.

- պատրաստ են եղել անմիջապես (այսինքն՝ առաջիկա 2 շաբաթվա ընթացքում) անցնել աշխատանքի:

Գործազուրկ են համարվում նաև անձինք, ովքեր հետազոտությանը նախորդող վերջին 4 շաբաթվա ընթացքում չեն ունեցել և չեն փնտրել աշխատանք, որովհետև արդեն գտել են և կսկսեն աշխատել առաջիկա 2 շաբաթվա ընթացքում:

Գործազրկության մակարդակը հաշվարկվում է գործազուրկների թվաքանակի տոկոսային հարաբերությամբ աշխատուժի թվաքանակին:

- **Ջբաղվածության պետական գործակալությունում գրանցված գործազուրկ** են համարվում տարիքային կենսաթոշակի իրավունք տվող տարիքը չլրացած՝ աշխատանք փնտրող և «Ջբաղվածության մասին» ՀՀ օրենքով նախատեսված գործունեության որևէ տեսակով չգրադված անձինք, ովքեր աշխատանք գտնելու նպատակով հաշվառված են զբաղվածության պետական գործակալությունում, պատրաստակամ են անցնելու հարմար աշխատանքի և ստացել են գործազուրկի կարգավիճակ:

Գործազրկության (աշխատանք փնտրելու) միջին տևողությունն այն ժամանակահատվածն է, որի ընթացքում քաղաքացին փնտրել է աշխատանք և հաշվարկվում է որպես կշռված միջին մեծություն գործազուրկների դիտարկվող կազմի համար:

Աշխատանք փնտրող են համարվում, ըստ ՀՀ գործող օրենսդրության, 16 տարին լրացած այն գործունակ անձինք, ովքեր, անկախ զբաղված լինելու հանգամանքից, աշխատանքի տեղավորման նպատակով դիմել են զբաղվածության պետական գործակալություն:

Գործարուի հայտարարած աշխատուժի պահանջարկը թափուր աշխատատեղերի (պահանջվող աշխատողների) քանակն է, որի վերաբերյալ գործատուն հայտնում է զբաղվածության պետական գործակալությանը:

Մեկ թափուր աշխատատեղի ծանրաբեռնվածությունը հաշվարկվում է զբաղվածության պետական ծառայությունում հաշվառված աշխատանք փնտրող քաղաքացիների թվաքանակի և գործատուների կողմից նույն գործակալությանը հայտնած թափուր աշխատատեղերի քանակի հարաբերությամբ:

Ինչ վերաբերում է կազմակերպությունների կողմից ներկայացվող տեղեկատվությանը, ապա.

Աշխատողների թվաքանակը պահի դրությամբ կազմակերպության աշխատողների թվաքանակն է հետազոտվող տարվա **սկզբի՝** հունվարի 1-ի կամ հետազոտվող տարվա **վերջին օրվա՝** դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ հաշվի առնելով այդ օրն աշխատանքի ընդունվածների և աշխատանքից ազատվածների թվաքանակների տարբերությունը:

Աշխատատեղերի թիվն աշխատողների փաստացի թվաքանակի (գրադեցված աշխատատեղերի), այդ թվում՝ արտաքին համատեղությամբ աշխատողների և թափուր աշխատատեղերի հանրագումարն է՝ հետազոտվող տարվա հունվարի 1-ի կամ դեկտեմբերի 31-ի դրությամբ:

Կրճատված աշխատատեղերի թիվն աշխատատեղերի / հաստիքների կրճատումն է **հետազոտվող տարվա ընթացքում** ՀՀ աշխատանքային օրենսգրքի 111-րդ և 113-րդ հոդվածներով սահմանված հիմքերով (օրինակ՝ արտադրության ծավալների, տնտեսական, տեխնոլոգիական և աշխատանքի կազմակերպման պայմանների փոփոխում, արտադրական անհրաժեշտությամբ պայմանավորված աշխատողների թվաքանակի կրճատում և այլն):

Նոր ստեղծված աշխատատեղ է համարվում հետազոտվող տարում ոչ միայն **առաջին անգամ ստեղծված** կազմակերպությունը, այլ նաև գործող կազմակերպությունում, օրինակ՝ արտադրության ընդլայնման, հերթափոխային աշխատանքների ավելացման, ինչպես նաև վերակազմավորման արդյունքում ստեղծված **նոր** (առաջին անգամ ստեղծված) աշխատատեղը և այլն: Նոր ստեղծված աշխատատեղը կարող է լինել գրադեցված կամ՝ դեռևս ոչ, բայց որում նախատեսված է ընդունել աշխատող՝ ոչ ուշ քան **հետազոտվող տարվան հաջորդող մեկ ամսվա ընթացքում**:

Նոր ստեղծված աշխատատեղ չի համարվում կազմակերպությունը, որը ստեղծվել է լուծարված և վերակազմավորված իրավաբանական անձի հիման վրա, հետևաբար՝ նոր ստեղծված աշխատատեղում աշխատող չեն համարվում այն աշխատողները, որոնք աշխատանքից ազատվել և նորից ընդունվել են վերակազմավորված կազմակերպությունում:

Ներկայացնենք նաև որոշ ցուցանիշների հաշվարկման մեթոդաբանական առանձնահատկությունները.

Աշխատանքային ռեսուրսների վերաբերյալ տեղեկատվության աղբյուրը տնային տնտեսություններում (S/S) իրականացվող աշխատուժի ընտրանքային հետազոտությունն է:

2018թ. հունվարից վերանայվել է աշխատանքի շուկայի վիճակագրության մեթոդաբանությունը՝ համաձայն **Աշխատանքի վիճակագիրների միջազգային 19-րդ համաժողովում (19-րդ ԱՎՄՀ) ընդունված «Աշխատանքի, գրադեցվածության և աշխատուժի թերօգտագործման վիճակագրության մասին» 2013թ. հոկտեմբերին ընդունված բանաձևի առանցքային դրույթների**:

19-րդ ԱՎՄՀ ներդրման շրջանակում.

- **Ընդլայնվել է** «աշխատանքային գործունեություն» հասկացության շրջանակը, որի նպատակն է ճանաչել և չափելի դարձնել աշխատանքի բոլոր ձևերը՝ հստակ տարբերակված ըստ **վճարվող և չվճարվող** աշխատանքների: **Աշխատանքային**

գործունեության ձևերի չափման սույն մեթոդաբանության առանձնահատկություններից է նաև այն, որ մարդը ՄԻԱԺԱՄԱՆԱԿ կարող է ներգրավված լինել աշխատանքային գործունեության մի քանի ձևերում:

- **Ընդլայնվել է** «աշխատուժի թերօգտագործում» (labour underutilization) հասկացության շրջանակը՝ բնութագրելով ոչ միայն գործազուրկ բնակչության, այլ նաև 15-75 տարեկան բնակչության մյուս խմբերի՝ զբաղվածների և աշխատուժից դուրս բնակչության, չբավարարված առաջարկը:

Աշխատուժի թերօգտագործումը (**ԱԹ**) բնութագրող ցուցանիշներն են.

1. **ԱԹ1.** Գործազրկության մակարդակ.
2. **ԱԹ2.** Աշխատաժամանակի տևողությամբ պայմանավորված թերզբաղվածության (time-related underemployment) և գործազրկության զուգորդված մակարդակ.
3. **ԱԹ3.** Գործազրկության և պոտենցիալ աշխատուժի զուգորդված մակարդակ.
4. **ԱԹ4.** Աշխատուժի թերօգտագործման ագրեգացված ցուցանիշ:
 - **Նախկին** սահմանման համեմատ զբաղվածների թվաքանակից բացառվել են նրանք, ովքեր հետազոտվող շաբաթում իրենց տնտեսությունում զբաղվել են **ապրանքների արտադրությամբ սեփական վերջնական սպառման համար**, եթե արտադրված արտադրանքը նշանակալի մասնաբաժին է ունեցել տնային տնտեսության սպառման մեջ:
 - **Վերանայվել** են որոշ ցուցանիշների անվանումները:
 1. «**Տնտեսապես ակտիվ բնակչություն**» եզրույթը վերանվանվել է «**աշխատուժ**» (բնօրինակը՝ labour force): Համապատասխանաբար, «**Տնտեսական ակտիվության մակարդակ**» եզրույթը վերանվանվել է «**Աշխատուժի մասնակցության մակարդակ**» (labour force participation rate):
 2. «**Տնտեսապես ոչ ակտիվ բնակչություն**» եզրույթը վերանվանվել է «**աշխատուժից դուրս բնակչություն**» (population out of labour force):

Վարձու աշխատողների միջին ամսական անվանական աշխատավարձի վերաբերյալ ցուցանիշի աղբյուրը՝ ՀՀ պետական եկամուտների կոմիտեի եկամտային հարկի և սոցիալական վճարի անձնավորված հաշվառման տվյալների բազան է:

ՀՀ ՊԵԿ վարչական ռեգիստրի ներդրման արդյունքում ապահովվել է ամսական կտրվածքով վիճակագրական միավորների ամբողջական ընդգրկվածություն՝ ներառելով **մեկ և ավելի վարձու աշխատող** ունեցող **բոլոր կազմակերպություններին՝** կազմակերպատիրավական ձևից անկախ:

Միջին ամսական անվանական աշխատավարձը հաշվարկվում է աշխատանքի վարձատրության և դրան հավասարեցված այլ վճարումների ընդհանուր գումարի (ինչպես դրամական, այնպես էլ բնաիրային տեսքով) հարաբերությամբ աշխատավարձի հաշվարկման համար կիրառվող աշխատողների միջին ամսական թվաքանակին:

Իրական աշխատավարձը բնութագրում է դիտարկվող ժամանակահատվածում անվանական աշխատավարձի գնողունակությունը, այսինքն՝ ապրանքների և ծառայությունների այն ծավալը, որը հնարավոր է ձեռք բերել աշխատավարձով, ելնելով բազիսային ժամանակաշրջանի գներից: Ցուցանիշը հաշվարկվում է տվյալ ժամանակաշրջանի անվանական աշխատավարձի հարաբերությամբ՝ նույն ժամանակաշրջանի սպառողական գների ինդեքսին:

Իրական աշխատավարձի ինդեքսը հաշվարկվում է միևնույն ժամանակաշրջանի անվանական աշխատավարձի ինդեքսի (աճի տեմպի) և սպառողական գների ինդեքսի հարաբերությամբ:

Հավելված 2. Աղքատությունը բնութագրող ցուցանիշները և դրանց հաշվարկման մեթոդաբանական առանձնահատկությունները

Աղքատ⁶⁶ են համարվում այն անձինք, որոնց սպառումը մեկ չափահաս անձի հաշվով ցածր է աղքատության ընդհանուր վերին գծից, իսկ **ծայրահեղ աղքատ** համարվում են նրանք, որոնց սպառումը մեկ չափահաս անձի հաշվով ցածր է պարենային (կամ ծայրահեղ) աղքատության գծից:

Աղքատության խորության տոկոսային գնահատականը ցույց է տալիս, որ եթե երկիրը հնարավորություն ունենար յուրաքանչյուր անհատի հաշվով (և՛ աղքատ, և՛ ոչ աղքատ) համախմբելու աղքատության գծի այդ տոկոսին համարժեք ռեսուրսներ, և եթե այդ ռեսուրսները հատկացվեին աղքատներին, ապա աղքատությունը տեսականորեն կվերացվեր, ենթադրելով, որ աղքատներին ուղղված աջակցությունն ամբողջությամբ հատկացվում է աղքատներին: Եթե հաշվարկվում է միայն աղքատ բնակչության հաշվով, ապա աղքատության խորությունը ցույց է տալիս աղքատության պակասուրդը, այսինքն՝ այն ցույց է տալիս, թե որքանով է աղքատների միջին սպառումը ցածր աղքատության գծից:

Աղքատության սրությունը ցույց է տալիս աղքատների միջև եղած անհավասարությունը. այն հաշվի է առնում, որ որոշ աղքատների սպառումը շատ է հեռու աղքատության գծից, իսկ որոշ աղքատների սպառումն էլ շատ է մոտ աղքատության գծին:

Բնակչության բարեկեցության, կենսամակարդակի գնահատման կարևոր քանակական ցուցանիշ է համարվում տվյալ երկրում **աղքատության մակարդակը**: Աղքատությունն արտահայտվում է տարբեր ձևերով և շոշափում կյանքի տարբեր կողմերը՝ սպառում, պարենային անվտանգություն, առողջություն, կրթություն, իրավունքներ, ներառյալ ծայնի, անվտանգության, արժանապատվության և արժանապատիվ աշխատանքի իրավունքը: Բնակչության կենսամակարդակի փոփոխության դինամիկան նկարագրվում է **նյութական և ոչ նյութական աղքատության** տեսանկյունից:

Ոչ նյութական աղքատության բնորոշիչներն են՝ վատ առողջությունը, կրթական ցածր մակարդակը կամ անգրագիտությունը, սոցիալական անտեսվածությունը կամ մերժվածությունը, անպաշտպանվածությունը, իրավունքների և խոսքի ազատության անկիրառելիությունը, այն է՝ գործնականում սեփական խնդիրների մասին հայտնելու անկարողությունը: Ոչ նյութական աղքատության հաղթահարման հիմնական ուղղությունը կրթական, առողջապահական և սոցիալական ծառայությունների մատչելիության բարելավումն է, այն է՝ անվճար ծառայությունների հասցեականության

⁶⁶ Այս և մյուս սահմանումները տե՛ս <https://www.armstat.am/file/doc/99516748.pdf>

առավել հստակությունը և վճարովի ծառայություններից օգտվելու կարողությունների աճը: Համաձայն ՀՀ ՎԿ⁶⁷՝ աղքատության չափման հիմնական (պաշտոնական) մոտեցումը Հայաստանում համարվում է 2009թ. մեթոդաբանությունից բխող բացարձակ՝ ըստ սպառման, աղքատությունը: Նշված համատեքստում, համաձայն Համաշխարհային բանկի սահմանման, բացարձակ աղքատությունը՝ տնային տնտեսությունների որոշակի կենսամակարդակի ընդունելի նվազագույնի ապահովման անկարողությունն է: Հայաստանում բարեկեցության մակարդակը գնահատելու համար օգտագործվում է սպառման ագրեգացված ցուցանիշը: Միջազգային փորձից ելնելով՝ ընդունված է, որ **սպառումը եկամտի համեմատ ավելի ճշգրիտ տեղեկատվություն է ներկայացնում բարեկեցության մակարդակի վերաբերյալ**, քանզի տնային տնտեսության սպառման ագրեգատը սովորաբար ավելի ճշգրիտ տեղեկատվություն է պարունակում և այնքան էլ զգայուն չէ կարճատև տատանումների նկատմամբ, քան եկամտի ցուցանիշը՝ հատկապես ցածր և միջին եկամուտներ ունեցող երկրներում: Եկամուտների մասին տեղեկատվությունը պակաս վստահելի է, քանի որ եկամուտները հաճախ թաքցվում կամ ավելի պակաս են նշվում հարցվողների կողմից, ինչպես նաև, եկամուտների որոշ տեսակների բնորոշ է սեզոնայնության նշանակալիությունը:

Սպառման ագրեգացված ցուցանիշը ներառում է հետևյալ բաղկացուցիչները.

ա) սպառված պարենային և ոչ պարենային ապրանքների արժեքը, ներառյալ՝ սեփական արտադրության ապրանքները, մարդասիրական կազմակերպություններից և այլ աղբյուրներից ստացված օգնությունը և

բ) երկարատև օգտագործման ապրանքների հաշվարկային արժեքը: Հայաստանում նյութական աղքատությունը գնահատելու համար օգտագործվում է բացարձակ աղքատության հայեցակարգը:

Հայաստանի բնակչությունը, ըստ աղքատության կարգավիճակի, բաժանվում է աղքատ և ոչ աղքատ տնային տնտեսությունների: Աղքատներն իրենց հերթին ներառում են՝ **չափավոր⁶⁸ (շատ) աղքատներ և նրանց թվում՝ ծայրահեղ աղքատներ:**

Աղքատությունը Հայաստանում գնահատվում է 1996 թվականից սկսած: 2009-ից Հայաստանում օգտագործվում է Համաշխարհային բանկի վերանայված՝ թվով երրորդ մեթոդաբանությունը (երեք մեթոդաբանությամբ հաշվարկված աղքատության ցուցանիշները համեմատելի չեն): Աղքատ են գնահատվում նրանք, ում սպառումը մեկ չափահաս անձի հաշվով ցածր է եղել աղքատության վերին գծից, չափավոր (կամ շատ) աղքատ են գնահատվում նրանք, ում սպառումը մեկ չափահաս անձի հաշվով ցածր է եղել աղքատության ստորին գծից, իսկ ծայրահեղ աղքատ կամ թերսնված գնահատվում

⁶⁷ https://www.armstat.am/file/article/poverty_2019_a_6.pdf

⁶⁸ «շատ աղքատներ» տերմինը փոխարինվել է «չափավոր աղքատներ»-ով:

են նրանք, ում սպառումը մեկ չափահաս անձի հաշվով ցածր է եղել աղքատության պարենային գծից:

Հավելված 3. Նոր ստեղծված և կրճատված աշխատատեղերն ըստ աշխատատեղի բնույթի և տնտեսության ինստիտուցիոնալ հատվածների, 2019-2020թթ. եռամսյակներ

Հազ. աշխատատեղ

	2019թ.				2020թ.
	I եռամսյակ	II եռամսյակ	III եռամսյակ	IV եռամսյակ	I եռամսյակ
Ընդամենը					
<i>Նոր ստեղծված աշխատատեղեր</i>	8.5	11.5	13.0	11.6	9.2
<i>Ստեղծված</i>					
անորոշ ժամկետով	6.5	8.9	10.6	9.5	...
որոշակի ժամկետով	2.0	2.6	2.4	2.1	...
<i>Կրճատված աշխատատեղեր</i>	9.5	9.1	10.2	12.0	9.0
<i>Ստեղծված</i>					
անորոշ ժամկետով	8.2	6.8	8.4	9.2	...
որոշակի ժամկետով	1.3	2.3	1.8	2.8	...
Պետական					
<i>Նոր ստեղծված աշխատատեղեր</i>	2.5	2.7	3.4	3.1	3.6
<i>ստեղծված</i>					
անորոշ ժամկետով	1.7	1.8	2.1	1.8	...
որոշակի ժամկետով	0.8	0.9	1.3	1.3	...
<i>Կրճատված աշխատատեղեր</i>	2.7	4.3	2.9	3.2	3.8
<i>ստեղծված</i>					
անորոշ ժամկետով	1.8	2.8	2.2	1.9	...
որոշակի ժամկետով	0.9	1.4	0.7	1.3	...
Ոչ պետական					
<i>Նոր ստեղծված աշխատատեղեր</i>	6.0	8.8	9.6	8.5	5.6

<i>ստեղծված</i>						
անորոշ ժամկետով	4.8	7.1	8.4	7.7	...	
որոշակի ժամկետով	1.2	1.7	1.2	0.8	...	
Կրճատված աշխատատեղեր	6.7	4.8	7.3	8.8	5.2	
<i>ստեղծված</i>						
անորոշ ժամկետով	6.3	4.0	6.2	7.3	...	
որոշակի ժամկետով	0.4	0.8	1.1	1.5	...	

Աղբյուր՝ ՀՀ ՎԿ

«ԼՈՒՅՍ հիմնադրամ» գրառմամբ հրապարակված նյութը պաշտպանված է ՀՀ օրենսդրությամբ և միջազգային համաձայնագրերով: Հրապարակված նյութի բոլոր իրավունքների բացառիկ իրավատերը «ԼՈՒՅՍ» հիմնադրամն է:

Նյութի ամբողջական կամ դրանից քաղվածքների վերարտադրումը թույլատրվում է իրականացնել միայն «ԼՈՒՅՍ հիմնադրամ» գրառման և համապատասխան [ակտիվ հղման](#) տեղադրման պայմանով՝ պահպանելով «ԼՈՒՅՍ» հիմնադրամին պատկանող նյութերի օգտագործման կարգը: